

2-99

ԶՐՈՒՅՑՆԵՐ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1928

355
2-99

ԻՆՉՈՎ Ե ԶԻՆՎԱԾ ԿԱՐՄԻ ԲԱՆԱԿԸ

Պատերազմում մարդ բուռնցքներով չի կռվում, այց նա իր ձեռքում ունի զանազան տեսակ զենքեր: Պատերազմում գործադրվելու լին հրացաններ, գնդացիներ, հրանոթներ, սվիններ, թրեր, տանկեր ու սավառնակներ (աերոպլաններ): Պետք է իմանալ զենքի յուրաքանչյուր տեսակի հատկությունը, վորպեսզի կարելի լինի հասկանալ և՛ բանակի կազմակերպությունը, և՛ նրա ուսուցման սիստեմը:

Հեշտությունը կարելի չէ նկատել, վոր մի կողմից հրացանի, գնդացրի ու հրանոթի և մյուս կողմից թրի ու սվինի մեջ ելական տարբերություն կա: Վո՞րն է այդ տարբերությունը: Այն, վոր հրացանը, գնդացիը ու հրանոթը հակառակորդին հարվածում են և ավերում նրա կուուցվածքները հեռվից, գնդակներ ու արկեր նետելով, միջոցով սվինն ու թուրը կարող են թշնամուն հարվածել միայն բռնամարտում, այսինքն՝ այն ժամանակ, յերբ հակառակորդը շատ մոտ է գտնվում:

Այսպիսով մենք զենքը կարող ենք բաժանել չերկու տեսակի, նետող կամ հրազեն, ինչպես որինակ՝ հրացանը, գնդացիը, հրանոթը, ևս ը ազ են, ինչպես են թուրը, սվինը: Իր հերթին նետող—հրազեն—զենքը կարող է լինել ձեռքի, այսինքն այնպիսի զենք, վոր մարտում գործում է և վորը փոխադրում է մի մարդ-մարտիկ (հրացանը, ձեռքի նռնակը) և հրետանական հրանոթ, վորի շափն ու բաշը նկատի ունենալով, կարող են գործադրել միայն մի քանի մարտիկներ միայն (գնդացիը, հրանոթը):

Գրանագիր 572 ք. 5. 695 Տիրամ 3000
 Պետհրատի 2-րդ տպարան Յերևանում 250



3357-84

ՉԵՌՔԻ ՀՐԱՉԵՆԸ

Չեռքի հիմնական հրազենը, վորով զինված է կարմիր բանակը, ինչպես և բոլոր ոտարերկրյա բանակները, հրացանն է: Չեռքի այդ տեսակին մարդկությունը միանգամից չի անցել: Նախապատմական մարդն իր թշնամիներին սպանում էր մահակով, քարով, կամ նետով: Յերկիս թի գլուտից հետո սկսեցին գործադրել սրեր, թրեր ու նիզակներ: Այդ գեները մարդկությունը պահպանեց մինչև 1346 թիվը: Այդ թվից արդեն ռազմական գործում սկսեցին գործադրել վառողը, վորը վառվելիս շատ ուժեղ զայրվում էր և առաջացնում: Առաջին ձեռքի հրազենը ուներ յոթկաթե փողի տեսք, նրա քաշն էր 25 ֆունտ, լցնում էր փողարերանից, իսկ գնդակը գնդաձև էր: Այդ փողի անցքը հարթ էր, և նա կրակում էր 100—200 քայլի վրա: Աստիճանաբար կատարելագործվելով, նա դարձավ մեկ արտիստի ձանթի ապստամբ հրացանը:

Մեր կարմիր բանակը զինված է 3 դասնի, 1891 թվականի տիպարի, թեթևացրած հրացանով: Այդ հրացանի քաշն է 3,8 կիլոգրամ, պահեստատուփի մեջ մանուշակ է 5 փամփուռ, կրակում է սրածայր գնդակով, հրաձգությունն արագությունն է մի րոպեյում 10 ձիգ, գնդակի ամենամեծ հեռահասությունն է 4000 մետր: Մոտափորապես նույնպիսի հրացաններով են զինված աշխարհի բոլոր բանակները: Ինչպես բոլորին հայտնի չէ, հրացանը լավ հրացանաձգի ձեռքով անփոխարինելի գեներ է մոտավոր մարտի համար: Թեև նա գործոն է, գլխավորապես, կենդանի նպատակների դեմ, բայց և այնպես հրացանից արձակված գնդակը մոտ տարածություն վրա կարող է ծակել անցնել մինչև 35 հատ 2,5 սանտիմետրանոց շառի տախտակ, $\frac{1}{2}$ մետրանոց հողաթումբ, $\frac{3}{4}$ մետրի փայտե և 2 աղյուսանոց աղյուսի պատ:

Բացի հրացանից թե մեղանում և թե արատան

մասյան բանակներում գործադրվում են տարացաններ (կարաբին): Ատրացանի սխտեմը նույնն է ինչ և հրացանինը, բայց նրա փողն ավելի կարճ է և քաշը համարյա մեկ կիլոգրամով պակաս: Չեռքի հրազենին են սպառկանում նաև զանազան սխտեմների տարձանակները:

ՄԱՐՏԱԿԱՆ ՄՐԱՉԵՆԸ

Մրազենը ծառայում է թշնամուն սրահատելու կամ ծաղիկելու, խոցելու համար: Այդ նպատակի համար հրացանն ունի քառանիստ ավին: Թշնամուն սրահատելու համար ծառայում է սուրը (сабля) վորը կեռ ձև ունի, նրա այդ ձևը հեշտացնում է ուժեղ հարվածներ հասցնելը, բայց հնարավորություն չի տալիս ծակող հարված հասցնելու, ինչպես սվինը կամ գեղարդն (նիզակը) են հասցնում: Վերջինից հետո ձիու վրա նստած ձիավորին անհրաժեշտ է ունենալ մի այնպիսի սրազեն, վորով կարելի լինի և սրահատել և ծակել, ուստի հեծելակները զինված են թրերով: Վորոնք այնպես կեռ չեն, ինչպես սուրը:

ԳՆԴԱՅԻՐ

Կեռ շատ հին ժամանակներում մարդ յեքազում էր ստեղծել այնպիսի մի մարտական մեքենա, վորից կարելի լինի նետող արկերի մի քանի համազարկ տալ: Մինչև վերջինից գլուսը, նրա այդ ուղղությունը կատարած բոլոր փորձերն էլ մեծ արդյունքներ չէին տալիս: Հրազենի գլուսից հետո փորձեցին պատրաստել մի այնպիսի մեքենա, վորն իր ձեռքով նման լիներ մեծ բանակությամբ միասնված առանձին հրացանների, այսինքն՝ շատ փոքր ունենալով: Սակայն այդ «կարտեչոցները» ինչպես անվանում էին դրանց, հարմար չէին: Անցած դարի 80-ական թվականներին ամերիկական ճարտարագետ Մաքսիմը յետադարձան ուժը գործադրեց ձիվի ժամանակ, ոգտագործե-

յով այդ ուժը ձիգից հետո փակադակը բանալու, գնդա-
կաժ պարկուճը գուրս նեւելու, փողի մեջ նոր փամփուշա-
սայու, փողը փակելու և նոր ձիգ առաջացնելու համար:


Այդ մեքենան կոչվեց «գնդացիր»: Մարտիկի մաս-
նակցութունն այդ մեքենայի կամ գնդացրի գործողու-
թյանը լինում է միայն այն, վոր նա սկզբից լցնում է,
նշան է բռնում և մատը սղմում է ձգանի հարմարանքին:
Այդ մարտական մեքենան շափազանց տարածվեց բանա-
կում և այժմ Մաքսիմի գնդացիրը վոչ միայն հետևակի,
այլև հեծելազորի և այլ տեսակի զորքերի անխզելի մասն է:

Այդ մեքենայի մարտական նշանակութունն այն է,
վոր ավտոմատիկ լիցքով Մաքսիմի գնդացրից մի բուպե-
յում կարելի չէ արձակել մինչև 500 փամփուշտ: Գնդացրով
կատարած հրաձգութունը ստեղծում է այնպիսի կրակաշին
ծածկույթ, վոր հակառակորդի վորև է շարժումն անհնար
է դառնում: Հենց վոր սկսեց ճարձատել գնդացիրը, ամեն
վորք պետք է ծածկիլի տեղանքի ծալքերում և չի կարող
այլևս բարձրացնել գլուխը: Վերջին պատերազմի ժամա-
նակ գեպքեր են լեղել, չերը գնդացրային կրակուղղակի
գերանդու պես հնձել է ամբողջ վաշտեր ու գնդեր: Փա-
մանակակից հետևակի ամբողջ կազմակերպութունը հիմ-
նը ված է գնդացրային կրակի հզորության ոգտագործման
վրա:

Միաժամանակ բոլոր բանակները ձգտում էին բացի
Մաքսիմի գնդացրից ունենալ ավելի թեթև սիստեմի զրն-
գացրեր: Բազմաթիվ գյուտերից ու կազմվածքներից հետո՝
մենք այժմ ունենք մեր կարմիր բանակում ընդունված
հետևյալ տեսակի գնդացրերը.

ա) Մաքսիմի հաստոցավոր գնդացիր, քաշն է 28,25
կիլոգրամ, հաստոցով 60 կիլոգրամ, փամփշաի արամա-
շափը նույնն է, ինչ հրացանինը: Հրաձգության արագու-
թյունն է մեկ բուպելում 500 ձիգ, փամփուշտները հազ-
նում են ժապավենների վրա, յուրաքանչյուր ժապավենը


500 փամփուշտ. փողի պաղեցումը ջրով է կատարվում:
բ) Կուլտի գնդացիր չեռոտանու վրա. քաշն է 15 կի-



Նկ. 1.

լոգրամ, չեռոտանով 40 կիլոգրամ, պաղեցումը ողային է,
փամփշաի արամաշափը և ժապավենները մոտավորապես
նույնն են, ինչ Մաքսիմի գնդացրինը:

գ) Ֆեոդորովի սիստեմի ավտոմատիկ հրացանը. քաշն
է 4,2 կիլոգրամ, հրաձգության արագությունը՝ 60 – 100
ձիգ մի բուպելում, փամփուշտները մեկ, ուսական, չեն,



Նկ. 2.

այլ լուսանական, մի քիչ ավելի փոքր արամաշափի: Փա-
մփուշտները հազցնում են 25-ական հատ պահունակի մեջ:

Բացի այս՝ ամենից տարածված՝ սիստեմներից, մեր
բանակը գինված է նաև Շոշի և Լյուիսի գնդացրերով: Այդ
ձեռքի գնդացրերն ունեն մոտ 9 կիլոգրամ քաշ, հրաձ-

գության արագութիւնն է 120—200 ձիգ մի րոպեչում, պողեցումն ոգային է: Շոշի պահունակը վերցնում է 20—25 փամփուշա:


ՀՐԵՏԱՆԻՆ ՌԻ ՆՐԱ ՄԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԻՐ

Հրետանուն մենք կարող եյինք հանդիպել դեռ 1340 թվին: Այն ժամանակվա հրանոթները կառուցվում եյին լերկաթե շերտերի վրա, կրակում եյին քարե արկերով և արձակում եյին որական 3—4 ձիգ: Գործադրվում եյին գլխավորապէս բերդերի դեմ մղած կռիվներում: Հատկա- նալի լե, վոր նման հրանոթները չեյին կարող փոշ վոքի բովարարել, և աստիճանաբար սկսում են բարելավել այդ հրանոթների տեխնիկան:

1799 թվին սկսում են գործադրութիւն մեջ մտցնել պայթուցիկ արկեր ու սուժեր, վոր պատրաստած եյին թուշից (չուգուն) և վորի լիցքը վառող էր: XIX դարի 50-ական թվականները վերջում լերեան է գալիս ակոսա- վոր հրետանին: Իրա շնորհիվ ավելանում է հեռավոր տա- րածութիւնների վրա հրաձգութիւն կատարելու նարա- վորութիւնը: 1808 թվին ֆրանսիական Շրապնել անու- նով մի սպա առաջարկում է սուժը լցնել վառուցի հետք լառը գնդակներով. և այդ սուժին այնպիսի հարմարանք տալ, վոր նա պայթի փոշ թե գետնին զիպչելիս ստաց- ված հարվածից, ինչպէս այդ մինչև այժմ էր յեղել. այլ ոգում, գետնից ցանկացած տարածութիւն վրա: Այդ ժա- մանակից նման ձևի արկերը գլուտարարի անունով սկսե- ցին կոչել շրապնել:

Միաժամանակ թնդանոթներ պատրաստելու համար սկսեցին պողպատ գործադրել, և շնորհիվ հրանոթների տեխնիկական կատարելագործութիւն, հրետանու արագու- թիւնն որեցոր աճում է: Աճում է նաև հրետանական ար- կի ուժը, այսինքն՝ նրա տրամաչափը: Այդ առաջ է գա-

լիս նրանից, վոր հետեակը մարտում սկսեց ավելի ու ավելի ամուր խրամաններ փորել, և թեթև արկը հաճախ շեր կարողանում հաղթել խրամատում նստած հակառա-



Նկ. 3.

վորդին: Հարկավորվեցին շատ ուժեղ արկեր, վոր քնգու- նակ լինելին ավերելու հակառակորդի ամբութիւնները: Արկերի տրամաչափն աստիճանաբար աճում է և նախքան համաշխարհային պատերազմը հասնում էր մինչև 12 մա- նաչափի, իսկ ներկայումս մենք արդեն ունենք 16 մա- նաչափի հրետանի: Շնորհիվ տրամաչափի այսպիսի մեծու- թիւն մի քանի առանձին թնդանոթների հեռահասութիւնը հասնում է մինչև 100—150 կիլոմետրի:


Հրետանին փոշ միայն կովում է հակառակորդի կեն- քանի ուժի դեմ, փոշ միայն ավերում է նրա ամբութիւն- ները, փոշ միայն ձգաում է հանգեցնել հակառակորդի հրետանական կրակը, այլև կռիվ է մղում նրա ոգային ու- ժերի (ավիացիալի) դեմ: Հրետանին նույնպէս մեծ հա- ջրողութիւնը ոգտագործում է թունավոր գազերը, այդ- պիսի գազերով լցնելով իր արկերը: Շնորհիվ այս բոլոր հատկութիւններին, հրետանական կրակն այժմ իշխում է մարտադաշտում, և նրա գործողութիւնից է կ'խփած



մարտի վախճանը: Հրետա ու բանակը բանակներում տա-
րեց տարի աճում եւ Չիտկան քարըր փոխարինվում եւ ավ-
տոմոբիլներով ու տրակտորներով, խոշոր տրամաշափի
հրետանին փոխադրվում եւ չեղիաթուղային տամալներով
(պլաաֆորմա) եւ ա լն:

Ինչպիսի տիպարի հրետանի չե ընդունված մեր կար-
միր բանակում: Այդ հրետանին կարելի չե բաժանել շորս
խմբակի:

1) Դիրքային հրանոթներ, 2) ծանր հրանոթներ, 3)
դաշտային ծանր հրանոթներ եւ 4) դաշտային թեթև հրա-
նոթներ:



Նկ 4.

Դիրքային հրանոթները գործադրվում են բերդերի
պաշարման եւ դիրքային պատերազմի համար: Ծանր հրա-
նոթները գործադրվում են հակառակորդի դիրքերի հա-
տուկ կարևորություն ունեցող եւ լավ ամրացած տեղամա-
սերն ավերելու համար: Հրանոթների այդ չեղիու տեսակն
եւ սակավ զգուրաշափ են:

Դաշտային ծանր հրանոթները գործում են հետևակի
հետ միասին եւ պետք են գալիս հակառակորդի հրետանու
դեմ կռվելու եւ նրա աժրություններն ավերելու համար:

Դաշտային թեթև հրանոթներն ավերում են հակառակորդի
արհեստական արգելքները, կռիվ են մղում նրա հրետա-
նու դեմ, վոչնչացնում են կենդանի ուժը եւ կռվում են
ուրալին հակառակորդի դեմ:

Նույն արկի թռիչքի հատկությունը՝ բոլոր հրանոթ-
ները բաժանվում են թնդանոթների, հորիցների եւ հրա-
սանդների (մորտիրա): Թնդանոթի արկը թռչում եւ սփռո-
ված, հրասանդի արկն ունի թռիչքի ուղղորդ գիծ, այ-
սինքն՝ նա կարող ե հարվածել հակառակորդին, վորը
ծածկված ե թագստոցի լետևում, հորիցի արկի թռիչքն
ունի թռիչքի միջին գիծ թնդանոթի ու հրասանդի գծերի
միջև:

Հրետանին հարվածում ե արկերով: Շրապնելի մասին
մենք արդեն ածացինք: Բացի շրապնելից կան նոնակներ,
այսինքն Փուգասային արկեր, վոր պայթում են գեանին
կամ վորեւ արգելքի հարվածից: Զրահահար արկերը կա-
րող են ծակել-անցնել հակառակորդի զրահը: Կան նաև
հրձիգ, լուսատու, քիմիական արկեր, վոր, ինչպես ցուց են
տալիս անունները, գործադրվում են շենքերը հրդեհելու,
տեղանքը լուսավորելու ե հակառակորդին թունավորելու
համար: Կան նաև ազիտացիոն արկեր, վոր հակառակորդի
կողմը ազիտացիոն թուուցիկներ (պրոկլամացիաներ) են
նետում:

Բացի դաշտային ուժեղ հրետանուց, կա նաև մոտա-
կա մարտի հրետանի, այսինքն՝ այնպիսի հրետանի, վոր
շնորհիվ իր փոքր չափերի ու թեթև քաշի կարող ե հե-
տևել ե նրան ողնել հակառակորդի դեմ մղած անմիջական
մարտում: Մեր սպառազինման մեջ ընդունված ե Մակկենի
ե Ռոպենբերգի 37 միլիմետրանոց ավտոմատիկ թնդանոթ-
ները: Բացի դրանից կան նաև ականանետներ ու ոմբա-
նետներ, վոր գործադրվում են զլխավորապես դիրքային
պատերազմում, այսինքն՝ այն ժամանակ, չերբ չեղիու
կողմերն ամուր նստել են դիրքերում:

ՉԵՌՔԻ ՈՒ ՀՐԱՅՄՆԻ ՆՈՆԱԿՆԵՐ

Մենք հրազեն սպառազինության լրիվ գազափարը առիթ չեքինք լինի, յեթե չխոսեցինք ձեռքի ու հրացանի նունակների մասին: Այդ նունակները հետևակը գործադրում է անմիջորեն հակառակորդի հետևակի դեմ մղած մարտում:

Կարմիր բանակում ընդունված են հետևյալ նյունակները.


ա) Չեռքի, 1914 թվականի տիպարի նունակ, ընդհանուր քաշն է՝ 700 գրամ, իսկ նրա մեջ գտնվող պայթուցիկ նյութի քաշը՝ 400 գրամ: Այդ նունակը նետում են թշնամու վրա 35—40 մետրից, իսկ պայթյունից հետո, փոր տեղի չե ունենում նետելուց 4 վայրկյան անց, ստացվում է մոտ 200 կտորտանք, փոր ընդունակ են հակառակորդին հարվածել պայթյունի վայրից 6—8 մետր տարածություն վրա:

բ) Չեռքի, Միլսի սիստեմի, նունակ: Քաշն է՝ 550 գրամ, գործադրվում է մինչև 600 մետր տարածությունից նետելու համար. պայթյունն առաջանում է նետելուց 5 վայրկյան անց, ստացվում է մոտ 150 կտորտանք, փոր ընդունակ են հակառակորդին հարվածել պայթյունի վայրից 50 մետր տարածության վրա:

Նունակների այսպիսի, կամ նման, սիստեմով զինված են հետևակի բոլոր հրացանաձիգները: Բաց, բացի այդ սիստեմներից կան նաև Նովիցկու և Ֆեդորովի սիստեմի ուժեղ նունակներ: Լցված նունակի քաշն է՝ 2,2 կիլոգրամ, պայթուցիկ լիցքի քաշն է 1,6 կիլոգրամ: Այդ նունակն ապերիչ մեծ ուժ ունի և գործադրվում է, փորպես պայթուցիկ փամփուշա:

Վերսիլեակ ձեռքի նունակները գործադրվում են միայն մոտ տարածություններից, միայն հղացավ, փոր ավելի նպատակահարմար է հակառակորդին հարվածել հրացանի

նունակներով: Այսպիսի նունակներ են 1915 տիպարի նյունակները, փորոնց քաշն է՝ մոտ 600 գրամ, իսկ հետաձուլվումը՝ 220 քալ: Այսպիսի նունակը տալիս է մոտ 300 կտորտանք, փոր ցրվում են 300 քալ շառավիղով: Այսպիսի նունակներով հրաձգությունը կատարվում է սովորական հրացանից, բայց հատուկ զնդակներով և նշանառություն հատուկ հարմարանքներով:



Նկ. 5.

Կան նաև քիմիական ձեռքի նունակներ: Նրանց քաշն է՝ 850 գրամ, իսկ հեղձուցիչ նյութի քաշն է՝ 550 գրամ: Այդ նունակների կառուցվածքի բոլոր մանրամասնությունները միանգամայն նույն են, ինչ 1914 թվականի տիպարի նյունակինը: Նետած քիմիական նունակում 4 վայրկյան անց պայթում է պատիճը (կապսուլ), նունակի բունը պայթում է, և հեղձուցիչ հեղուկը ցրվում է անկման վայրում, արագ գոլորշիանում և թունավորում հակառակորդին:

Կան նաև քիմիական ձեռքի նունակներ: Նրանց քաշն է՝ 850 գրամ, իսկ հեղձուցիչ նյութի քաշն է՝ 550 գրամ: Այդ նունակների կառուցվածքի բոլոր մանրամասնությունները միանգամայն նույն են, ինչ 1914 թվականի տիպարի նյունակինը: Նետած քիմիական նունակում 4 վայրկյան անց պայթում է պատիճը (կապսուլ), նունակի բունը պայթում է, և հեղձուցիչ հեղուկը ցրվում է անկման վայրում, արագ գոլորշիանում և թունավորում հակառակորդին:

ՀՐԱՆԱԳՍՏ ՄԵՔԵՆԱՆԵՐ ՈՒ ԳՆԱՅՔՆԵՐ

Հակառակորդին փորքան հնարավոր է մեծ հարված հասցնելու համար ազմական տեխնիկան սպառազործում է բազմազան միջոցներ: Նա անուշադիր չթողեց նաև ավտոմոբիլների և չերկաթուղային տեխնիկայի աճումը:

Ավտոմոբիլները ծածկվում են զրահով, փորը նրանց պաշտպանում է զնդակներից ու արկերի կտորտանքից: Ավտոմոբիլների ներսում տեղավորվում են սպասավորները:

ու գնդացիները, իսկ յերբեմն նաև հրանոթները, և այսպիսի մարտական մեքենան, լավ ճանապարհներ յեղած դեպքում, կարող է հակառակորդին շատ անտխորժություններ պատճառել:

Քանի վոր ներկայումս բոլոր յերկիրներում զարգացած է յերկաթուղային ցանցը, և շատ հաճախ յերկաթուղագիծն անցնում է մարտադաշտերով, ուստի վորոշեցին զրահավորել մի քանի զնացքներ, և այդ գնացքները գործադրել, վորպես շարժուն մարտիոցներ:

Մական զրահապատ մեքենաների ու զրահապատ գնացքների գործադրությունը սանձանափակ է, վորովհետև նրանք պահանջում են լավ ճանապարհներ ու յերկաթուղագիծ: Ուստի ռազմական միաքը ձգտում էր զամենյուր զրահավորված մարտական մի այնպիսի գործիք, վոր կարողանար հետևել մարտադաշտով անկախ նրանից, թե կան արդյոք հարմար ճանապարհներ:

ՏԱՆԿԵՐ

Մարտիկին վահանով հորվածներից պաշտպանելու միտքը նոր չէ: Դեռ հին դարերում և ասպետութչան շորջանում մարտիկները ծածկվում էին զրահով և այսպիսով պաշտանում իրենց՝ հակառակորդի սրերի ու նետերի հարվածներից: Հենց վոր հանդես յեկավ հրազենը, և գընդակներն սկսեցին հեշտութչամբ ծակել անցել ասպետի սպառազինությունը, այդ բոլոր զրահներն ու վահանները թանգարան հանձնվեցին: Միայն հարյուրավոր տարիներ անց, յերբ հանդես յեկավ թրթուրածև հաստոցի վրա ավտոմորիլը, հզացավ այդ գյուտը ռազմական նպատակների համար ռզտագործելու միտքը: Յեվ, իրօք, այդպիսի մարտական սայլը համաշխարհային պատերազմում հսկայական ռզուտ տվեց, վորովհետև նա կախում չունի ճանապարհներից, իբ շարժումով իր տակին ձևում է լարափակոց-

ները և հսկայական ազդեցութչուն է գործում հակառակորդի վրա:

Մեզանում ընդունված են տանկերի յերեք տեսակ. թեթև տանկեր, ծանր տանկեր և ռազիո տանկեր:

Ռեկոնչի թեթև տանկը սպառազինված է մի քանի գնդացիներով և 37 միլիմետր տրամաչափի մեկ հրանոթով: Այդ տանկն ունի շարժիչի 10 ժամվա աշխատանքի բենզինի պաշար: Նրա քաշը լրիվ մարտական բեռնավորումով մոտ 6,700 կիլոգրամ է (մոտ 420 փուլթ): Տանկը կարող է անցնել մինչև 2,2 մետր լայնութչան խրամատներով: Տանկի շարժման առաջութչունն է մի ժամում 8 ից մինչև 12 կիլոմետր: Նա ազատ կարող է անցնել մեկ մետր խորութչան գետեր, հեշտութչամբ տապալում է 40 սանտիմետր հաստութչամբ ալյուսի պարիսպներ, մինչև 25 սանտիմետր հաստութչամբ ծառեր և պոկում է մինչև 5 սանտիմետրի յերկաթե ձողեր:

Ծանր տանկը զինված է յերկու հատ 57 միլիմետրանոց արագաձիլ թնդանութչանով և 2—4 գնդացիներով: Քաշն է 35 տոնն, շարժման արագութչունն է մի ժամում 4—6 կիլոմետր, կարող է անցնել 4,5 մետր լայնութչամբ խրամատներից: Վառելանյութի պաշարը բավականացնում է շարժիչի 6 ժամվա աշխատանքի համար:

Ռազիո-տանկն իր կառուցվածքով նման է թեթև տանկին, նա սպառազինված է ռազիո-կայանով՝ հրամանատարական կայանի հետ կապ պահպանելու համար:

Աշտասանմանյան բանակները զինած են նույնպիսի տանկերով: Ներկայումս տանկերի վրա մեծ հույսեր են դնում: Յենթադրում են, վոր տանկերը կարող են պատուել հակառակորդի ամրացրած շերտը, և ուղեկցելով հարձակվող հետևակին, կարող են վերջինիս ոգնել՝ վոչնչացնելու հակառակորդին:

Տանկերի զեմ կովելու համար ամենագործոն միջոցը հրետանին է, բայց կարելի չէ նաև հաջողութչամբ

գործադրել ձեռքի նսնակներ և կրակել հրացաններից գործադրել զանազան գնդակներով:

ԿՈՒՎԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

— Ամեն ինչ հին և յուսնի տակ, — ասում է առաջին նուշը վերաբերում է նաև կուփի քիմիական միջոցների գործադրություն: Դեռ հին ժամանակներում թարստոցում նյութառած հակառակորդին դուրս ելին անում, ծծմբի ծախսապարտ:

Բայց և այնպես գաղափար կռիվն ամենամեծ գարգազումն ստացավ համաշխարհային պատերազմում: 1915 թվի ապրիլի 22-ին գերմանացիք դադար բաց թողեցին հակառակորդի դեմ և այդ ժամանակներից պիտանական քիմիկոսներն ու ռազմական տեխնիկները շարունակ մասնավորապես ելին այն բանի մասին, թե ինչպես պատրաստել ամենատեղեղ թունավոր մի նյութ, և դրա հետ միասին այդ նյութի դեմ իրենց զինվորների համար ունենալ հակադրակներ:

Բոլոր թունավորող նյութերը բաժանվում են 4 խմբերակի, նայած թե ինչպես են նրանք գործում մարդկանց վրա:


1) Առաջին խմբակի թունավորող նյութերը հիվանդագրին հազ են առաջացնում, փչացնում են թոքերը և խեղդելով մահ պատճառում: Իրանք կոչվում են հեղձուցիչ գազեր:

2) Յերկրորդ խմբակի թունավորող նյութերն են: Նրանք ներգործում են արյան վրա և վարկենապես մահ առաջացնում:

3) Յերրորդ խմբակին պատկանում են այն նյութերը, վոր ներգործում են աչքի լորձնաթաղանթի վրա, առաջ արցունքներ են հոսեցնում աչքից և ժամանակավոր կամ մշտական կուրություն են պատճառում: Այդ գազերը կոչվում են արտասովաբեր, նրանք մահացու չեն:

4) Չորրորդ խմբակի թունավորող նյութերը կաշվի և լորձնաթաղանթի բորբոքում են առաջացնում այրվածքների պես: Իրանք կոչվում են պայարական գազեր:

5) Հինգերորդ խմբակի թունավորող նյութերը սաստիկ հարբուխ են պատճառում, առաջացնում են փորշտոց ու փսխում, վոր չիրբեմն նուշնիսկ մահ է պատճառում: Այդ գազերը կոչվում են փոշտացնող գազեր:



Նկ. 6.

Այս բոլոր գազերը գործադրվում են հակառակորդին վռնչացնելու համար մեծ մասամբ հրետանական քիմիական հրաձգություն միջոցով, վոր կատարվում է թունավոր նյութերով լցված արկերով: Սակայն յուրաքանչյուր արկում թունավոր նյութը լինում է ընդամենը արկի ընդհանուր քաշի մոտ 10 տոկոսի չափ:

Ան թե ինչու մոտակա մարտի հեռակալություններում ավելի շահավետ է գործադրել քիմիական աղաններով ուժեղացված թուներ:

Յերբեմն հրետանական արկերի փոխարեն գործադրվում են գազանետներ, կամ գազազնդալին գրոն: Դադանեաները հակառակորդի կողմն են նետում միանգամից մեծ քանակությամբ արկեր: Դադազնդալին գրոնի ժամանակ թունավորող նյութերը բաց են թողնում հատուկ մետաղի անոթներից: Իրանով պեղծվում է գազային մի ամպ, վորն



3357-84

ուղեկից բամին տանում է հակառակորդի կողմը: Գազերը կարելի չէ բաց թողնել նաև սալառնակներից քիմիական ուղմբեր նետելով:

ԾԽԱԾԱԾԿՈՒՅԹՆԵՐ ՈՒ ՀՐԱՆԵՏՆԵՐ

Շատ հաճախ անհրաժեշտ է լինում հակառակորդի աչքից թազցնել իրենց գորքերի զսասվորությունը, կամ նրանց՝ ռազմական գործողությունների պատրաստվելը: Գրա համար գործադրվում է ծխածածկույթը, վորը յեթե լայն ճակատով է կատարված, ծածկում է հակառակորդից աչք ամենը, ինչ մենք անում ենք:

Ծխածածկույթը կազմվում է ծխազլաններ վառելուց:

Կարմիր բանակի սպառազինության մեջ կան նաև հատուկ գործիքներ, վորոնցով կարելի չէ վորոշ տարածության վրա կրակ նետել հակառակորդի կողմը: Այդպիսի գործիքները կոչվում են հրանետաներ: Կա պայուսակալին հրանետ, վորի բաշն է $24\frac{1}{2}$ կիլոգրամ: Այդ հրանետը փոխադրում են շալակած, նա կրակ է մղում 21 մետրի վրա:

Կա նաև ծանր հրանետ, վորի բաշն է $1\frac{1}{2}$ տոն, վորը տեղավորում են խրամատում, բայց նրա մղած կրակը հասնում է 71—78 մետրի:


ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՅՆԵՐ

Հասկանալի չէ, վոր վոշ մի բանակ չի կամենա կորցնել իր մարտիկներին թունավոր նյութերի պատճառով: Քիմիական նյութերի աճման հետ միաժամանակ աճում են պաշտպանության միջոցները: Այստեղ կա յերկու գրխավոր միջոց. ա) ստեղծել աչնպիսի գթգապատարաններ, վորտեղ գազը չի կարող ներս մտնել. բայց այդ միջոցը մեզ զրկում է մարտիկներին մարտում գործադրելու հնարավորությունից: Ուստի և այս միջոցը գործու-

ղրվում է, զլխավորապես, ոժանդակներում, խաղաղ բնակչության և ռազմական այն հիմնարկների համար, վոր անմիջորեն չեն մասնակցում մարտին. բ) տալ բոլոր մարտական զորամասերին քիմիական պաշտպանության համար հակազագեր (զիմակներ) և հակազագալին հազուատ:

ԱՎԻԱՅԻԱՆ ՈՒ ՆՐԱ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ մեր Միության յուրաքանչյուր բաղաբացի գիտե, թե ինչ է ավիացիան և ինչ նշանակություն ունի նա ռազմական գործում: Մենք այստեղ կը հիշեցնենք միայն, վոր բացի ավիացիայից ռազմական գործում գործադրվում են նաև աչնպիսի ողային ապարատներ, վոր լցված են գազով, վոր թեթե են ողից: Այդ ապարատները բաժանվում են յերկու խմբակի՝ ղեկավարվող և չղեկավարվող: Չղեկավարվողներն են ազատ ողապարիկները, վոր թռիչքի ժամանակ կախում ունեն ողային հոսանքներից և կարող են միայն բարձրանալ ու իջնել: Ղեկավարվող ողային ապարատների թվին են պատկանում կոշտ, փափուկ և կիսակոշտ ապարատները:



Նկ. 7.

Կոշտ ապարատների տիպին մենք կարող ենք դասել ցեպելինը, կակուղ ապարատի տիպին՝ անրոստատը և կիսակոշտին՝ խառը սխտեմները:

Մեզ ամենից շատ պետք է հետաքրքրեն ցեպեղինները, վոր կարող են զինված լինել վոչ միայն գնդացրերով, այլ և հրանոթներով, նրանք ընդունակ են ողուսմ մնալու մի քանի որ անընդհատ, նրանց գործողութեան շառավիղը հսկայական է: Բայց նրանք շատ ծանրաշարժ են և չուրաքանչյուր սավառնակ, ավելի դյուրագարձ փնելով, կարող է նրանց վոչնչացնել:

Ուստի ուսագնացային միջոցները պատերազմում համեմատաբար սահմանափակ նշանակութիւն ունեն, և դարձյալ ողուսմ իշխողը սավառնակն է (անրուպրան): Իր մարտական նշանակութեամբ սավառնակը բաժանախում է հետախուզական, կործանիչ և ուժեղորոյ տեսակների:

Հետախուզող սավառնակը պետք է վերցնի չերկու մարդ (ողաչու և դիտող), մեկ-յերկու գնդացիր, սաղիտակաչան, լուսանկարչական սպարառ և վառելանյութի մեծ պաշար: Նա պետք է հնարավորութիւն ունենա բարձրանալու շատ բարձր և անցնելու մեծ տարածութիւն:



Նկ. 8.

Կործանիչը հատկապես հակառակորդի սավառակների դեմ կռուելու համար է: Նա պետք է շատ դյուրագարձ և լավ սպառազինված լինի: Նրա նպատակն է վար իջեցնել կամ չետ քշել հակառակորդի սավառնակը: Կործանիչները լինում են միտեղանի կամ չերկուեղանի:

Ռմբատարները պետք է մեծ բեռնամբարձութիւն ունենան, նրանք կարող են իրենց հետ տանել մոտ 2000 կիլոգրամ պայթուցիկ նյութեր և 4 հոգի սպասավոր:

ՈՐԿԱՆԱՆ ԶՈՐՔԵՐ

Բացի զենքի մարտական տեսակներից, մենք բանալում կարող ենք հանդիպել բազմաթիվ այլ զորքերի, առանց վորոնց հետևակի, հեծելազորի, ուղաչնացութեան և հրետանու գործողութիւնները կը դժվարանային: Այդպիսի զորքեր են՝ կապի, ճարտարագիտական, սանիտարական, թիկունքային և այլ զորքեր: Կապի ու ճարտարագիտական զորքերն իրենց սպառազինման վրա ունեն շատ մասնագիտական ռազմական գործիքներ ու սպարառներ: Թվել մի առ մի այդ բոլոր գործիքներն ու սպարառները մի փոքրիկ զրույցում չափազանց դժվար է, վորովհետև դրանք բազմազան են:

Կապի զորքերը կապ պահպանելու համար են: Կապի համար նրանք գործադրում են ռադիո կայաններ, հեռագիր, հեռախոս, տեսողական ազդանշաններ և այլն:

Ճարտարագիտական զորքերը նպաստում են զիրքերի ամրացման, կառուցում են կամուրջներ ու ճանապարհներ, լուսավորում են տեղանքը լուսարձակներով և տանում են ավտոմոբիլային ծառայութիւն:

Ռազմական հաղորդակցութիւնների զորքերը նույնպես մեծ աշխատանք ունեն՝ յերկաթուղազծեր և սովորական ճանապարհներ կառուցելու և նորոգելու գործում:

Սանիտարական զորքերն ունեն իրենց հատուկ հիվանդանոցները, սանիտարական գնացքները, ավտոմոբիլներն ու սայլերը, վրանները և այլն:

Անասնաբուժական ծառայութիւնն ունի հատուկ հիվանդանոցներ և այլն:

Այժմ տեսնում եք, թե ինչպիսի բարդ կազմակերպութիւն է ներկայացնում իրենից բանակը: Այլ կերպ ել չեր կարող լինել, վորովհետև ժամանակակից պատերազմը, ռազմական տեխնիկայի հսկայական զարգացման որոք, մի շափազանց բարդ յերևուլթ է: Նա, ով չի ուզում պարտ-

վել այդ պատերազմում, պետք է մտահոգվի, վորպեսզի բանակը մատակարարված լինի անհրաժեշտ գեներով և կովի տեխնիկական միջոցներով:

Զորքերի հիմնական տեսակը հետևակն է, գեների հիմնական տեսակը՝ հրացանը, գնդացիքն ու հրանոթը, բայց միայն դրանով, ի հարկե, չլա գնալ չի լինի: Բանակում ավելորդ վոչինչ չկա, կովի յուրաքանչյուր միջոց և զորքերի յուրաքանչյուր տեսակ լրացնում են հետևակի հզորութունը և նրան ապահովում հաղթանակին հասնելու հնարավորութունը:

Ամբողջ բանակն ընդհանուր առմամբ գեների բազմազան տեսակների և ոգնական ծառայությունների մի զուգակցումն է և նրանց ընդհանուր գումարը մի մարտական մեխանիզմ է կազմում, վորը պետք է ջախջախի հակառակորդին:

Զրույցում մենք շոշափեցինք կովի մի շարք գանազան միջոցներ: Բայց չի կարելի կարծել, թե գալիք պատերազմում պետք է գործադրվեն միայն այդ միջոցները, վորովհետև տեխնիկան, քանի գնում, զարգանում է և ամեն որ մի նոր գյուտ է բերում ռազմական բնագավառում: Իսկ յուրաքանչյուր գյուտ անմիջապես անդրադառնում է զորքերի կազմակերպության և նրանց մարտավարության վրա: Ուստի բոլոր նրանք, ովքեր ուսումնասիրում են ռազմական գործը կամ հետաքրքրվում են դրանով, պետք է հիշեն, վոր ռազմական գործն ամբողջ ժամանակ զարգանում է և մենք բոլորս պետք է պատրաստ լինենք կովի նոր միջոցների լեռան գալուն:

ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Պետք է արդյոք կազմակերպություն և ի՞նչ բան է այդ: Յերևակայեցեք մի խումբ բանվորներ, թվով 10—15 հոգի, վորոնք բարձրացնում են մի ծանր գերան: Նրանք բռնում են գերանից, ինչպես իրենց հարմար է, և իրենցից մեկն ու մեկի հրամանով, կազմակերպված, սկսում են միանգամից բարձրացնել: Հարց եք տվել դուք, արդյոք, ձեզ, թե ինչի համար եր ծանր գերանը բարձրացնելիս այդ տված հրամանը: Այդ հրամանը պետք էր, վորպեսզի առանձին բանվորների ամբողջ ուժը միացնելին մեկ տեղ և միանգամից գործադրելին գերանը բարձրացնելու համար: Յեթե հրամանը չլիներ, և յուրաքանչյուր բանվոր, կպչելով գերանին, փորձեր բարձրացնել, այն ժամանակ, չերբ ինքն ուզեր, դրանից վոչինչ չեր դուրս գա: Նա գերանը չեր բարձրացնի, վորովհետև միայն նրա ուժը չեր բավականացնի դրա համար: Իսկ մնացած բանվորները նրան չեյին ոգնի, — ուրեմն այս դեպքում բանվորներն աշխատանքի անցան անկազմակերպ: Հետևապես, կազմակերպությունը մեզ անհրաժեշտ է, վորպեսզի մեր բոլոր ուժերն ոդտագործենք յավազուն ձեով:

Աշխատանքի անցնելով, բանվորները միտք ունեյին բարձրացնելու գերանը, և նրանց կազմակերպությունն այն նպատակն ուներ, վորպեսզի ի մի հավաքեր ամբողջ ուժերը: Դրա համար նրանք բռնեցին գերանից ամբողջ լերկարությունը (վորպեսզի նա չթեքվի այս կամ այն կողմը) և սկսեցին տված հրամանով բարձրացնել: Ուրեմն դրած նպատակի համեմատ ել նրանք կազմակերպվեցին: Բանակը նպատակ ունի ջախջախելու թշնամուն, և նրա ամբողջ կազմակերպությունն ել պետք է հարմարեցրած լինի այդ նպատակին:

Զորքն առանձին մարտիկների կազմակերպութիւնն է: Ինչնումն ե այդ կազմակերպութիւնն էյութիւնն: Յերևակայեցեք անկազմակերպ աշխատավորների մի ժողով, վորը շեֆական կապ հաստատելու համար մենք պետք է ուղարկենք Այգեստան ու Նորաշեն գյուղերը: Յեթե դուք ամբիոն բարձրանաք և գոչեք՝ կեսդ գնացեք Այգեստան, մյուս կեսդ ել Նորաշեն, — այն ժամանակ բոլորն ել կսկսեն ձեր պատվերը կատարել այնպես ինչպես իրենք են ուզում: Ժողովականներից մի քանիսը վոչ մի գնուց ել չեն գնա, մյուսները գնուց կը մեկնեն կառքով, ավտոմոբիլով, մի քանիսը կը մտնեն գարեջրատանը մտածելով, թե զործը շաապ չե և այն: Յերբ և քանիսը Այգեստան կհասնեն, քանիսը՝ Նորաշեն, վոչ վոքի հայտնի չե: Իսկ ինչ պետք է անել, վոր ժողովականների կեսը գնա Այգեստան, իսկ մյուս կեսը՝ Նորաշեն:

Իրա համար հարկավոր ե բոլորին բաժանել հարյուրակներին, և յուրաքանչյուր հարյուրակի դիւին մի պետ նշանակել: Յուրաքանչյուր հարյուրակա պետ իր հարյուրակը կը բաժանի տասնյակի և տասնյակա պետ կը կարգի:

Յերբ այդ ամբողջն արած կը լինեք, դուք ձեզ մոտ կը կանչեք հարյուրակապետներին և նրանց կասեք, թե ուր, ինչնու և ինչ ճանապարհով պետք է գնալ: Հարյուրակապետները կը հավաքեն տասնյակապետներին և նրանց նույնպես կասեն, թե ինչ կարգով ուր և ինչպես պետք է տանեն իրենց տասնյակներին: Տասնյակապետները կը գան իրենց տասնյակները և կասեն տասնյակի բոլոր մարդկանց, թե ուր, ինչու և ինչպես պետք է գնա տասնյակը: Այդպիսով դուք կազմակերպում եք չերթը: Ի հարկե, հարյուրների, տասնյակների բաժանելը ձեզանից շատ ժամանակ կը լինի, բայց զրա փոխարեն դուք վստահ կը լինեք, վոր մարդիկ կը գնան այնտեղ, ուր պետք է:

Զորքը վաղորոք բաժանված է մասերի, յուրաքանչյուր մասի զուլս անցել է պետը: Ամեն մի պետ, ստանալով բարձր պետի պատվերը, հազորդում է հաջորդ ստորադաս պետին, սա հազորդում է հետևյալ ստորադաս պետին, և այսպես մինչև պատվերը հասնում է ամենակրասեր պետին. վորը բացատրում է իր մարդկանց պատվերի էությունը և ցուցումներն է տալիս այն մասին, թե ինչպես պետք է կատարել պատվերը: Ահա բանակի կազմակերպութիւնն էյութիւնը:

Գուցե ձեր մտքում մի այսպիսի հարց ծագի, թե ինչնու պետք է պատվերները հազորդել մի պետից՝ մյուսին, և ինչ հարկ կա այդքան շատ պետեր ունենալու: Ավելի լավ չեք լինի պետերի թիվը կըձատել, թողնելով միայն մեկին, և պատվերները տալ ուղղակի մարտիկներին:

Բանից դուրս ե գալիս, վոր այդպես անել չի կարելի: Փորձով, հարյուրավոր փորինների ընթացքում, գտել են, վոր մեկը կարող է ղեկավարել միայն 4—5 և վոչ ավելի, մարդկանց գործողութիւնները: Իսկ չերբ ստորադրյալների թիվը 4-5-6 ավելի չե, վոչոք, վորքան ել խելոք լինի, չի կարող հետևել նրանց գործողութիւններին, չի կարող նրանց ղեկավարել, նա կը խառնի ամեն ինչ ու կը խառնագորի բոլորին:

Հետևապես, առանց պետերի յուրա գնալ չի կարելի: Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մի կազմակերպութիւն, վորտեղ յուրաքանչյուր պետին չենթարկված լինի 4—5 հոգուց վոչ ավելի: Յերբ կան պետեր, պատվերներն առանց արգելի հասնում են սոսկական մարտիկներին և նրանց գործողութիւններն ուղղում ընդհանուր նպատակին: Անմիջապես մարտիկներին պատվերներ տալը, ինչպես ժողովականների օրինակից տեսաք, նույնպես չի կարելի, քանի վոր մարտիկները շատ են և նրանց բոլոր

րին ինչպես հարկն և չի կարելի բացատրել: Բոլորովին այլ բան է, չերբ պետեր կան, վորովհետև փոքր թվով մարդկանց հետ խոսելն ավելի հեշտ է, քան թե շատ մարդկանց հետ:

Այգրպես ուրեմն, գորամասը բաղկացած է մանր խմբակներից, վորոնք միանում կազմում են խոշոր խմբեր, սրանք իրենց հերթին, միանալով կազմում են ավելի խոշոր խմբեր և այլն:

Յուրաքանչյուր, թեկուզ և ամենափոքր, խմբակի գլուխ է անցել պետը. և բոլոր պետերը ստորադասության կարգով կապված են իրար հետ: Այդ խմբակները ռազմական գործում կոչվում են գորական ստորաբաժանումներ:

ԻՆՉ Ե ՄԱՐՏՈՒՆԱԿ ԶՈՐԱՄԱՍԸ

Այժմ հարց է ծագում, թե կարելի՞ չէ արդյոք այսպեպես անցնել գորական ստորաբաժանումը մարտունակ համարել, չեթե միայն նա բաժանված է ավելի մանր ըստ ստորաբաժանումների, վորոնք ունեն իրենց պետերը:

Իրան կարելի չէ այսպես պատասխանել. վնչ, նա զեռ մարտունակ չէ: Վորպեսզի նա մարտունակ լինի, յուրաքանչյուր մարտիկ պետք է կարգապահ, վարժեցրած ու դաստիարակված լինի: Կարգապահություն է կոչվում պետերի պատվերներին առանց առարկելու հնազանդվելը, թեկուզ կյանքին սպառնալիս լինի մահացու վտանգ: Կարգապահությունը միանգամից չեն վարժվում: Յուրաքանչյուր մարտիկ պետք է վարժվի կարգապահության, ճիշտով, վոր չեթե ինքն անկարգապահ է, դրանով նա կարող է կորստյան մասնել իր ընկերներին, և վոր առանց կարգապահության չկա գործողությունների միասնություն:

Իսկ գերան բարձրացնող բանվորների որինակից տեսաք, գերանը կարելի չէ բարձրացնել միայն այն

դեպքում, չերբ բոլոր բանվորները բարձրացնում են միանգամից, հրամանով: Յերևակայեցեք, վոր հրամանը տրված է, բայց մի հինգ բանվոր գերանը չեն բարձրացնում, այլ միայն ցույց են տալիս, վոր բռնել են նրանից: Նրանք չեն թարկվեցին գերանը բարձրացնելու մասին տրված հրամանին: Նրանք անկարգապահ են, վորով ստիպում են իրենց ընկերներին ուժասպառ լինել: Գերանը ծանր է, և բանվորները, շնորհիվ իրենց հինգ ընկերով անկարգապահության, չեն կարող բարձրացնել: Ուրեմն միայն կազմակերպությունը քիչ է, պետք է նաև կարգապահություն ունենալ:

Մարտը գերան բարձրացնել չէ, նա շատ ավելի բարդ գործ է: Այստեղ մարդ յենթակա չէ վախի ու ինքնապահպանման զգացմունքին, իսկ այդ զգացմունքը հաղթահարելու համար՝ ուրիշ ազդեցություն է պետք: Այգրպեսի մի դրսի ազդեցություն է պետի հրամանը: Պետի այդ կամքն առանձին մարդկանց, առանձին գորական ստորաբաժանումների գործողություններն ուղղում է միասնական նպատակին, վորով և ձեռք է բերվում առաջելագույն հաջողությունը:

Բացի կազմակերպությունից անհրաժեշտ է նաև մարտիկի ուսուցումն ու դաստիարակությունը: Այստեղ մենք մանրամասնորեն կանգ չենք առնի դրա վրա, այլ միայն կասենք, վոր չեթե մարդ ուզում է վորև բան շինի, պետք է սովորի: Առանց վարժության վոչինչ չի կարելի շինել: Իսկ մարտը չափազանց բարդ գործ է, և թշնամուն հաղթելու համար հարկավոր է սովորել, սովորել ու սովորել:

Այսպես ուրեմն, մենք գտանք, վոր իր ուժերն առավելագույն արդյունքով ոգտագործելու համար բանակը պետք է լինի կազմակերպված, կարգապահ, սովորեցրած ու դաստիարակված:

Այժմ տեսնենք, թե ինչպես պետք է կազմակերպել զինված մարդկանց, այսինքն՝ բանակին:

Յուրաքանչյուր բանակ պատրաստվում է մարտական գործողությունների համար: Իսկ այդ գործողությունները կազմող են ընթացակալ բազմազան պայմաններում. մի տեղ լավ է հեծյալ մարտիկի գործողության համար, մի այլ տեղ՝ հետևակի համար, մի տեղ անհրաժեշտ են ծանր թնդանոթներ, մի այլ տեղ՝ թեթև, մի չերրորդ տեղում անհրաժեշտ կը լինի խրամատներ փորել ու կամուրջներ պատրաստել և այլն: Մարտը տեղի չե ունենում բազմազան պայմաններում և պահանջում է գործադրել զանազան գեներներ, զանազան բանակով: Այս բոլորը պետք է նախատեսնի կազմակերպությունը: Յուրաքանչյուր զորական ստորաբաժանում, նայած թե ինչ գործողությունների համար է նշանակված, պետք է համապատասխան թվով մարտիկ և համապատասխան զենք ունենա: Իսկ զենքն ու կռվի տեխնիքական միջոցներն այնքան բազմազան են, վոր նրանց ոգտագործելու համար ստեղծվում են զորքերի ու զենքի առանձին տեսակներ:

Իսկ ինչ բան են զորքի տեսակն ու զենքի տեսակը: Ինչպես բանվորները, նայած, թե ինչ գործիքով և ինչի վրա յեն աշխատում, բաժանվում են մետաղագործների, մանածագործների, փայտագործների և այլն, այնպես էլ զորամասերը, չնայած իրենց կրած սպառազինման, մտնում են զորքերի այս կամ այն տեսակների կազմի մեջ: Չորքի յուրաքանչյուր տեսակ կարող է լավ իրագործել միայն այն խնդիրները, վոր համապատասխանում են նրա տրամադրությունն տակ չեղած զենքին ու միջոցներին:

ԶՈՐՔԵՐԻ ՈՒ ԶԵՆՔԻ ԻՆՉ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԵՆ ԿԱԶՄՈՒՄ ԲԱՆԱԿԸ

Ներկայումս ցամաքային զինված ուժերը բաղկացած են զորքերի ու զենքի հետևյալ տեսակներից, հետևակ, հեծելազոր, հրետանի, զրահապատ ուժեր, քիմիական

զորքեր, ճարտարագիտական զորքեր, կապի զորքեր, տեխնիքական զորքեր և ոգնական զորքեր: Բացի զրանից կան ոգային ուժեր, վորոնց գործողություններն ընթանում են կամ ինքնուրույն, կամ ցամաքային ուժերի գործողությունների հետ միասին: Ոգային ուժերը բաժանվում են ոգային (սավառնակային) և ոգապարիկային տորմիդներ: Չորքերի հիմնական տեսակը համարվում է հետևակը, վորի գործողություններից կախված է մարտի բախտը: Յեթե հետևակը, որինակ, վերցրեց զյուզը, ուրեմն այդ գյուզը մերն է: Յեթե հետևակը նահանջում է, ուրեմն նահանջում են զորքերի մյուս տեսակները: Չորքերի վոչ մի տեսակ, բացի հետևակից, չի կարող ամուր պահել վերցրածը: Հետևակի հաղթությունը կամ պարտությունը վորոշվում է ամբողջ բանակի հաղթանակը կամ պարտությունը:

Ամենից հեշտ է ստեղծել հետևակը, բավական է մեկին զինել, սովորեցնել ու դաստիարակել, և ահա պարտատ է հետևակ զինվորը: Պատրաստ է մարտիկը, վորը կարող է կռվել յուրաքանչյուր տեղում: Իսկ զորքերի այլ տեսակների, որինակ, հրետանու մեջ պահանջվում է սպասավորել այնպիսի մի զենք, ինչպիսին թնդանոթն է: Թնդանոթն սպասավորելն արդեն մի մարդու բան չէ: Նրա մոտ աշխատում է մոտավորապես 10 հոգի: Մի հրետավոր ինքն իրան մարտում ոչինչ չարժէ: Մինչդեռ հրացանով զինված հետևակ զինվորն արդեն մի վորոշ ուժ է: Հետևակի համար անանցանելի վայրեր չկան: Ճահիճը, վորտեղ թնդանոթը կը խրվի մինչև կոկորդը, վորտեղ հեծելազորը կը խեղդի իր բոլոր ձիերին, հետևակի համար անցնելի յե: Վորտեղ կարող է անցնել առանձին մի մարդ, այնտեղ կանցնի և հետևակը: Յերեկն ու գիշերը, ձմեռն ու ամառը, վատ թե լավ չեղանակը—այս բոլորը հետևակի գործողությունների վրա ավելի քիչ են ազդում, քան զորքերի այլ տեսակների վրա: Հետևակը զին-

ժամ ե գլխավորապես հրացանով ու սվինով, այսինքն՝ հրագնով ու սրագնով: Նա հավասարապես պետքական ե թե հրամարտի ե թե՛ բռնամարտի համար: Այս ամենը ցույց են տալիս, վոր հետևակն իր հատկություններով ունի առավելագուցն ինքնուրույնություն ե դրա համար ել ժամանակակից բանակներում կազմում ե զորքերի հիմնական ե ամենաբազմաթիվ տեսակը:

Մենք այնպես գովարանեցինք հետևակին, վոր թերևս ձեր մեջ կասկած առաջացավ, թե զորքի այդպիսի լավ տեսակի հետ ել ի՞նչ կարիք կա զորքերի ու զենքի այ տեսակներ ունենալ:

ԻՆՉՈՒ ՊԵՏՔ Ե ԲԱՅԻ ՀԵՏԵՎԱԿԻՑ ՈՒՆԵՆԱԼ ՉՈՐՔԵՐԻ ՅԵՎ ՉԵՆՔԻ ԱՅԼ ՏԵՍԱԿՆԵՐ

Ահա թե ինչո՞ւ: Հետևակը դանդաղ ե շարժվում: Նա չի կարող զարգացնել իր մարտական հաջողությունը հետապնդումով: Շատ հեռուն վազել չես կարող, յերբ վր-րադ քարշ ե արված կամ ամրացված մոտ 30 կիլոգրամ բեռ, իսկ հակառակորդը նահանջում ե, արագ «ծլկում ե» ձեռքիցդ: Այ, հենց այդտեղ պետք ե նրան ջարդել, չթող-նել, վոր նա կանգ առնի, իսկ հետևակն այդ չի կարող անել:

Հետևակը շնորհիվ իր դանդաղաշարժության չի կարող նաև ժամանակին տեղեկանալ հակառակորդի չերևա-լու մասին, իսկ այդ շատ կարևոր ե հակառակորդի զի-մավորելուն պատրաստվելու համար: Այդ բոլորին խան-գարում ե նրա դանդաղաշարժությունը: Ահա այստեղ հե-տևակին ոգնության ե հասնում զորքի մի այլ տեսակը՝ հեծելազորը:

ԻՆՉՈՎ Ե ՀԵԾԵԼԱՉՈՐՆ ՈԳՆՈՒՄ ՀԵՏԵՎԱԿԻՆ

Հեծելազորը շարժվում ե արագ, և դա հասկանալի չե՛ չերկու վտար չորս վտարն չի հասնի: Հեծելազորի ա-

րագությունը նրան հնարավորություն ե տալիս հակառա-կորդին հետապնդելու չերկար ժամանակ ե արագ անց-նելու շատ առաջ ե իմանալու, թե վորտեղ ե հակառա-կորդը ե այդ հաղորդելու հետևակին: Միայն հեծելազորն ամեն տեղ գործել չի կարող: Նա անտառներ չի սիրում, նրա համար ավելի լավ ե բաց տեղանքը: Ուրեմն հեծե-լազորն անհրաժեշտ ե, նա լրացնում ե հետևակին:

Իսկ ինչի՞ չե պետք հրետանին: Նա չել ե պետք: Հետևակը զինված ե հրացանով ու գնդացիքով, վորն ամենից լավ հարվածում ե թշնամուն միայն մոտ տարա-ծություններից, որինակ, 1¹/₂ - 2 կիլոմետր տարածությու-նից: Հրացանի գնդակը կարող ե սպանել մարդուն, ձիուն ե ընդհանրապես կենդանի նշանները, բայց նա չի կարող ավերել հակառակորդի սարքած արգելքները: Նա չի կարող կովել թշնամու հրետանու դեմ, վորը շատ հեռու չե: Նա չի կարող խորտակել զրահապատ գնացքը, վորից գնդակը յետ ե թռչում, ինչպես պատին խփած սխեռը. նրա համար զժվար ե հակառակորդին հեռացնել խրա-մասներից: Այս ամենը ցույց են տալիս, վոր հրացանին ու գնդացրին, ուստի ե հետևակին անհրաժեշտ ե մի տ-վելի հզոր զենքի ոգնություն:

ՀՐԵՏԱՆՈՒ ՈՒԺԸ ՆՐԱ ԿՐԱԿԻ ՄԵՋՆ Ե

Այդպիսի զենք են այն հրանոթները, վորով զինված ե հրետանին: Հրետանին իր արկերով ավերում ե այն ամենը, ինչ անմատչելի չե գնդակներին: Բայց զժբախտա-բար հրետանին ուժեղ ե միայն իր հրաձգությամբ, նա կրակել կարող ե միայն այն ժամանակ, յերբ նրա հրա-նոթները հաստատված են: Շարժվելիս հրետանին անող-նական ե, փորրիկ յերեխայի պես: Այն ել ամեն ճանա-պարհ նրա համար անցնելի չե: Մեծ վերելքները, ճահիճ-ները, խոր ձյունը—այս բոլորը զժվարացնում են նրա շարժումը: Հանգստի ժամանակ հրետանին իրենից մար-

տական ուժ չի ներկայացնում: Հակառակորդի հանկար-
ծակի մի արշավ, և հրետանին կորած է, վորովհետև նա
չի կարող արագ պատրաստվել մարտի: Իրանից չեբեռում
է, վոր հրետանին չի կարող միայնակ գործել. նա շա-
րունակ կարիք ունի այնպիսի գորքերի պաշտպանություն,
ինչպիսին են հետևակն ու հեծելագորք:

Պաշտպանելով հրետանուն հակառակորդի գրոհներից,
հեծելագորն ու հետևակը փոխարենը նրանից ստանում
են կրակի հզոր ոգնություն: Առանց հրետանուն հետևա-
կի կամ հեծելագորի բանը դժվար կը լիներ, վորովհետև
նրանք թույլ են իրենց կրակով. հակառակորդի հրետա-
նին, տանկերը, դրահապատ ավտոմոբիլները նրանց որ
ու արև չեջին տա, ամեն տեղ նրանց կը հետապնդեյին և
անխնա կը ջախջախեյին:

Ինչպես տեսնում եք գորքերի տեսակների քննու-
թյունից, գրանցից վոչ մեկը չեր կարող ինքնուրույն լու-
ծել բոլոր մարտական խնդիրները, վորովհետև գորքերի
բոլոր տեսակներն ել ունեն այնպիսի բացասական կողմեր,
վոր կարելի չե հարթել գորքերի այլ տեսակների աջակ-
ցությունը: Հետևապես, պահանջվում են նրանց միատեղ,
համաձայնեցրած գործողություններ: Միայն ընդհանուր
ջանքերով կարելի չե հաջողություն հասնել:

ԻՆՉՈՒ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՄԻԱՅՆՈՒՄ ՀԵՏԵՎԱԿԻՆ ՀՐԵՏԱՆՈՒՆ ՅԵՎ ՀԵԾԵԼԱԶՈՐԻՆ

Սակայն հետևակի, հրետանու և հեծելագորի շահու-
վետ կողմերի միացումն իրազորվում է միայն այն դեպ-
քում, յերբ նրանց մեջ պահպանված է անհրաժեշտ հու-
մաշափությունը: Ավելորդությունը վոչ թե ոգուտ՝ այլ
վնաս կը բերի: Որինակ՝ յեթե հետևակին, կամ առավել
ևս հեծելագորին, չափից ավելի հրանոթներ տանք, այդ
կը զանգաղեցնի նրանց շարժումը, վորովհետև հրետանին
չի հասնի նրանց յետևից:

Բացի հրանոթներից պետք է կրել և արկեր, բանի
վոր առանց արկերի հո չե՞ս կրակի: Արկերը ծանր են,
մեծ քանակությամբ սայլերին չեն բարձի: Սովորաբար
արկերը փոխադրվում են դրա համար հարժարեցրած սայ-
լերով, — ոււմբարկղներով, — բայց հաճախ հարկավոր է
լինում դրա համար նաև սայլի վերցնել գույզացիներից:
Բոլորը միասին, — հրանոթները, ոււմբարկղներն արկերով
ու սայլերը — սայլերի մի յերկար շարան կը ստեղծեն, վորը
չի կարող դուրսադարձ լինել և դանդաղ է շարժվում:

Բացի դրանից, հրանոթներն ու ոււմբարկղները
բռնում են ամբողջ ճանապարհը և արդեն նրանց հետևող
գումակների համար դժվար է լինում շարժվել: Վատ յե-
զանակին (անձրևին, ցեխին) հրանոթները խրվում են
ցեխում և յերկար ժամանակ հարկավոր է լինում նրանց
այնտեղից դուրս քաշել: Այս բոլորը կաշկանդում է հետևակին,
ուստի և հրանոթները պետք է ունենալ վոչ-շատ և վա-
զել քիչ, այլ չափավոր:

Իսկ վ.՞րն է այդ չափը: Վորովհետև զինված ուժե-
րի գլխավոր մասը հետևակն (հրացանաձիգները) է կազ-
մում, ուստի և գորքերի մյուս տեսակների թիվը վորոչ-
վում է հրացանաձիգների թվի համեմատությունը: Մեզա-
նում հրետանին կազմում է բոլոր զինված ուժերի մարդ-
կային կազմի մեկ հինգերորդ մասը, այդ միևնույն է, թե
1000 հրացանաձիգին ընկնում է 4—5 հրանոթ: Արտասահ-
մանում, որինակ, Փրանսիայում, հրետանին ավելի չե,
այնտեղ յուրաքանչյուր հազար հրացանաձիգին ընկնում է
8 հրանոթ:

Հեծելագորի նորմալ թիվը հավասար է բոլոր զին-
ված ուժերի $\frac{1}{12}$ — $\frac{1}{15}$ մասին: Ավելի շատ հեծելագոր
պահելը դժվար է, վորովհետև նրա ծախքը շատ է:

Ի հարկե, վերոյիշյալ չափը մշտական չե. նա փոխ-
վում է նայած հետևյալ հանգամանքներին. — 1) Յերկրի
ուսգմա. տեխնիկական արտադրության վիճակին. վորտեղ

յերկիրը հաքուստ ե, գործարաններ շատ կան, այնտեղ ել բանտին ունի ավելի շատ հրետանի, գնդացրեր և ընդհանրապես կռվի տեխնիկական միջոցներ: Վորտեղ յերկիրն աղքատ ե, այնտեղ ել տեխնիկական միջոցները քիչ են:

2) Յերկրում չեղած ձիերի քանակին. վորտեղ ձիեր շատ կան, այնտեղ ել հեծելագորը շատ ե:

3) Այն տեղանքի բնույթին, վորտեղ կարող ե տեղի ունենալ պատերազմը: Յեթե տեղանքը լեռնոտ կամ ճահճոտ ե, այդ ազդում ե հրետանու քանակի վրա, վորովհետեւ այդպիսի տեղանքում հրետանի գործադրելը դժվար ե: Դժվար ե գործադրել և հեծելագոր, ուստի և հեծելագորի թիվը նույնպես փոքրացնում են: Իսկ յեթե տեղանքը բաց ե, կան միայն փոքր բլրակներ, հեծելագորի համար այդտեղ լայն սպարեզ ե բացվում, ուստի այդ գեպըում հեծելագորի թիվն ավելացնում են:

Այժմ քննության առնենք զենքի ու գորքերի այլ տեսակները:

Ի՞նչ ու պետք ե ունենալ գորքերի ու զենքի այլ տեսակները:

Ինչի՞ յեն նրանք պետք: Ահա թե ինչի: Նրանք թեթևացնում են հետևակի, հեծելագորի ու հրետանու մարտական գործունեությունը:

Ինչնով են թեթևացնում:

Զորքերի ու զենքի մյուս բոլոր տեսակներն ունեն մեծ քանակությունը տեխնիքական ամենաբազմազան միջոցներ: Այդ միջոցները պետք չեղած ժամանակ տրամադրում են հետևակին՝ հետևագորին ու հրետանուն: Նրանցից մի քանիսն ինքն ըստ ինքյան մարտական վոչ մի ուշ չեն ներկայացնում իրենցից, ինչպես, որինակ ճարտարագիտական գորքերը, կապի գորքերը, մյուսները բացի նրանից, վոր ոգնում են հետևակին, հեծելագորին ու հրետանուն, իրենք ևս հզոր ինքնուրույն ուժ են, այդպես

են, որինակ՝ ոգային ուժերը, քիմիական գորքերը, զրահապատ մասերը և այլն:

Զորքերի ու զենքի այն բոլոր տեսակների մասին, վոր հեշտացնում են հետևակի, հեծելագորի ու հրետանու մարտական գործունեությունը, մենք կխոսենք ներքևում: Այժմ անցնենք գորքերի ու զենքի առանձին տեսակների ավելի մանրամասն նկարագրության:

ԻՆՉՊԵՍ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԵՏԵՎԱԿԸ

Հետևակի կազմակերպության մեջ ամենափոքր խումբակը ջոկն ե, վոր բաղկացած ե 7—9 հրացանաձգից: Զոկերը չերկու տեսակ են լինում՝ հրաձգային ու գնդացրային: Հրաձգային ջոկերը զինված են հրացաններով, իսկ գնդացրային ջոկերը՝ ձեռքի ու հաստոցավոր գնդացիրներով: Յուրաքանչյուր ջոկի գլուխ ե անցել ջոկի հրամանատարը: Զոկը մարտում գործում ե մեկը մյուսից այնպիսի տարածության վրա, վոր արկի մեկ պայթյունը չկարողանա միանգամից հարվածել չերկու ջոկը: Այդպիսի տարածությունը ճակատի չերկարությունը կլինի 140—170 բայլը, իսկ խորությունը 100 քայլը: Հին ժամանակներում ջոկերն այնպիսի գեր չեղին խաղում, ինչ այժմս, վորովհետև հետևակը հարձակում եր գործում անընդհատ շղթաներով և մեկ ջոկը միանում եր մյուսին: Այժմ ջոկն հնքնուրույն խնդիրներ ե ստանում և արդեն իրենից ներկայացնում ե առանձին մարտական միավոր: Զոկի մարտական գործողությունները կախված են նրա հրամանատարի ու հրացանաձիգների պատրաստությունից: Ամենալավ արդյունքները կարելի չե ձեռք բերել մի քանի ջոկերի միատեղ գործողությամբ:

Յերքեր հրաձգային ու չերկու գնդացրային ջոկերը կազմում են հրաձգային դասակ: Դասակի գնդացրային ջոկերը զինված են՝ մեկը ձեռքի և մյուսը՝ հաստոցավոր գնդացիրներով: Ինչպես տեսնում եք, դասակն արդեն

բաժանումն ուժեղ մարտական միավոր ե: Երան տրված են գնդացրեր, վոր ուժեղացնում են հրացանածիգները կրակը: Իսկ հրացանածիգներն իրենց գնդացրային կրակի պաշտպանութեամբ հարձակվում են հակառակորդի վրա՝ մտանում են նրան և անցնում գրոհի: Դասակը, շնորհիվ իր մարտիկների թվին ու սպառազինման, կարող է ինքնուրույն հարվածներ հասցնել հակառակորդին իրենց հարձակման շերտում: Նա հանդիսանում է, այսպես կոչված, առաջին մարտավարական միավորը:

Դասակի գլուխն է կանգնել դասակի հրամանատարը, վորը բացի գնդացրային ու հրաձգային շոկերից իր արձանագրութեան տակ ունի նաև մարտիկների մի խմբակ, վորոնց միջոցով նա իր պատվերները հաղորդում է շոկերին: Այդ խմբակը կոչվում է ղեկավարութեան բլիշ:

Յերեք հրաձգային դասակ կազմում են մի վաշտ: Վաշտն արդեն ավելի ինքնուրույն մարտական միավոր է, քան թե դասակը:

Վաշտի կրակային ուժն ավելացնելու համար, նրան տրված է հաստոցավոր գնդացրների դասակ: Մարտում իր դասակները ղեկավարելու համար վաշտի հրամանատարն ունի այսպես կոչվող ղեկավարութեան դասակ, վորը բաղկացած է 2 շոկից: 1 շոկը փամփուշտ է կրում հրացանածիգների ու գնդացրային դասակների համար, 2-րդ շոկը սանիտարական է: Վաշտում մարդկանց թիվը 120—180 հոգի յե:

Մենք քննութեան առանց հրաձգային վաշտի կազմակերպութեանը: Լինում են նաև գնդացրային վաշտեր: Գրեգացրային վաշտը բաղկացած է 3 դասակից 2-ական հաստոցավոր գնդացրով և ունի լնդամենը 6 գնդացիր:

Թե հրաձիգ և թե գնդացրային վաշտերն ունեն իրենց խոհանոցները, վոր կերակուր են չեփում վաշտի մարդկանց համար: Մթերքը վաշտն ստանում է գնդից: Գրեգից վաշտը ստանում է նաև ռազմապաշար: Մթերքի ու

ռազմապաշարի համար վաշտն ունի իր գումակը: Ինչպես տեսնում եք, վաշտը բացի զուտ մարտական պարտակահանութեաններից կառարում է նաև տնտեսական պարտակահանութեաններ և կոչվում է՝ առաջին տնտեսական միավոր: Իր ուժով վաշտն արդեն կարող է մեծ դիմադրություն ցույց սալ հակառակորդին և, ինչպես և դասակը, հանդիսանում է մարտավարական միավորութեան:

Յերեք հրաձգային ու մի գնդացրային վաշտ կազմում են մի գումարտակ: Վորպեսզի գումարտակն ավելի ևս ուժեղ լինի նրան հաճախ տրվում է մանր արածաշափի հրետանի: Այդ հրանոթները, գումարտակի հրամանատարի ցուցումով, վաշտացնում են հակառակորդի այն գնդացիրներն ու հրանոթները, վոր խանգարում են հետևակի առաջխաղացման: Գումարտակն արդեն հետևակային հզոր միավորութեան է: Նա ունի շատ կրակային միջոցներ (գնդացրային վաշտ ու հրանոթներ), վոր բացում են նրա հանապարհը: Նա կարող է ուժեղ հարվածներ հասցնել հակառակորդին: Գումարտակն իր գումակը չունի, նրա սանտեսութեանը գտնվում է վաշտերում:

Յերեք գումարտակ կազմում են մի հրաձգային գունդ: Գունդն արդեն հետևակային միավորութեան չէ: Գնդում բացի հետևակից (գումարտակները) կա արդեն մարտից՝ բաղկացած 6 հրանոթից: Գունդն ունի նաև կապի դասակ, հեծյալ հետախույզների դասակ, սապյորական-բաղադրված խումբ, ռազմա-քիմիական կայան, վիրակապական շոկատ, տնտեսական մաս ու գումակ: Այս ամենը մենք չտեսանք վոչ դասակում, վոչ վաշտում և վոչ գումարտակում: Ուրեմն, գունդը, բացի հետևակից, ունի նաև դրքի ու գնքի այլ տեսակներ: Իրանցից մեկն, որինակ մարտիցն, ավելացնում է նրա կրակային ուժը: մյուսը՝ պետք է տնտեսական տեսակետից (տնտեսական մասը, գումակը), լերրորդը՝ գնքի ու զորքի առանձին տեսակի մի մասն է: Այսպես, որինակ, հեծյալ հետախույզ-

ների դասակը իրենից ներկայացնում է հեծելադուր և փոխարինում է հետևակին պակասող արագաշարժությունը հետախուզության ժամանակ: Սապյորական-քողարկման դասակը ղեկավարում է զիրքերի քողարկման և ամրացման աշխատանքները: Բրմիական խումբը վարում է գնդի հակազազային պաշտպանության ծառայությունը: Բացի դրանից գունդն ունի իր դպրոցը, վորտեղ պատրաստվում են ջոկի հրամանատարներ:

Ընդհանրապես, գունդն արդեն հետևակային միավորություն չէ, այլ զորքերի ու զենքի մի քանի տեսակների միացում է, և կոչվում է ընդհանուր-զորական միավորություն: Զորքերի ու զենքի այդ բոլոր տեսակները գնդում միացված են՝ միատեղ մարտական գործունեություն համար: Տեստական տեսակետից գունդը միանգամայն ինքնուրույն է և կապված է միայն հաշվետվությունը բարձր մատակարարող մարմնի հետ: Գունդն ինքն է գնում իր մթերքները և բաշխում վաշտերին: Շնորհիվ այդպիսի տնտեսական անկախության, գունդը կոչվում է առանձին գործառն:

Յերեք հրաձգային գունդ կազմում են մի զիվիզիա: Իրվիզիան մեծ, ընդհանուր-զորական միավորություն է, փորն ունի մոտ 10 հազար մարտիկ: Բացի հրաձգային գնդերից, զիվիզիան ունի մեծ թվով հրետանի, փոր համախմբելով կազմում է մի հրետանական գունդ: (Հրետանային կազմակերպության մասին տես՝ հրետանու կազմակերպությունը բաժնում):

Հրետանին հզոր զենք է զիվիզիայի հրամանատարի ձեռքում: Հրետանին իր կորստաբեր կրակը գործադրում է աջտեղ, վորտեղ այդ պահանջում է մարտի պարագան: Բացի հրետանուց զիվիզիան ունի նաև իր հեծելազորը՝ հեծելավաշտը (եսկադրոն): Հեծելավաշտը հետախուզություն է կատարում զիվիզիայի տեղամասում և ողտաղորդվում է, վորպես մարտական ուժ: Հեծելավաշտը բաղա-

կացած է 4 դասակից: Յուրաքանչյուր դասակ բաղկացած է յերկու ջոկից, ջոկերից մեկը զինված է թրերով, մյուսը՝ ձեռքի գնդացիներով: Գնդերի հետ կապ պահպանելու համար զիվիզիան ունի կապի վաշտ:

Իրվիզիայում կան զենքի ու գորքի համարյա բոլոր տեսակները ավելի մեծ թվով, քան թե գնդում: Բաց ինչու բոլոր տեսակները չունի: Ունենալու հարկ էլ չկա: Զորքերի ու զենքի շատ տեսակներ գործառնի անդրաժեշտ են միայն ժամանակավորապես և կարիք չկա դրանց շարունակ պահելու իրենց կազմի մեջ: Այսպես՝ որինակ՝ գրահապատ մասերը պետք են աջտեղ, վորտեղ կա խճուղի կամ յերկաթուղի: Իրվիզիան կարող է գործել և աջպիսի վայրերում, վորտեղ նման ճանապարհներ չկան, և այդ դեպքում նրան պետք չեն զրահապատ զորքեր: Իսկ յերբ հարկավոր լինեն, նրան այդպիսի զորքեր կտա բարձր միավորությունը՝ բանակը: Նույնը և այլ ուրիշ զորքերի և զենքերի տեսակներն են:

Իրվիզիան բացի զորամասերից ունի սանիտարական մաս, սանիտարական գումակով, ունի տրանսպորտ, վորով գնդերին փոխադրում են մթերք ու ռազմաօդաչար, և անասնաբուժական հիվանդանոց՝ ձիերին բժշկելու համար: Իրվիզիան անտեսական տեսակետից ինքնուրույն է:

Յերկու կամ յերեք զիվիզիա կազմում են մի զորամարմին: Զորամարմինը մեծ զորական միավորություն է, փորը կարող է կռվել նույնիսկ իրենից գերազանց հակառակադի գեմ մի քանի որ շարունակ՝ առանց սերիշի սկսություն: Զորամարմնի հզորությունն ավելացնելու համար նրան տրվում է մի բաժնյակ ծանր հրետանի: Զորամարմնի հրետանին, շնորհիվ իր հեռահարության և ուժին, կռիվ է մղում հակառակորդի հրետանու դեմ և ավերում է իրն ամենը, ինչ չի կարող ավերել զիվիզիայի հրետանին: Զորամարմնի հրետանական բաժնյակն ունի 24 ծանր հրանոթ: Իրքերն ու ժեղացնելու, կամուրջներ կառուցելու

ճանապարհներ նորոգելու և այլ նպատակների համար գործարարինն ունենում ե սապորյական գումարտակ՝ բաղկացած չորս վաշտից, վորակց գտնվում ե աշխատանքների համար անհրաժեշտ ամբողջ գույքը: Հետախուզութեան համար գործարարինն ունի իր ողային ուժերը՝ 2 կամ 3 հետախույզ սավառնակ:

Դիվիզիաների ու հարեանների հետ կապ սլանդանեզ հանձնարարվում ե կապի վաշտին, վոր բաղկացած ե 5 դասակից: Զորամարմինն ունի իր գումակը, վորը դիվիզիաներին մատակարարում ե այն ամենը, ինչ նրանց տնտեսական ե:

Հետևյալ բնդհանուր գորական բարձր միավորութունն ե բանակը: Բանակը բաղկացած ե մի քանի գորամարմիններից: Զորամարմինների բանակը վորտղվում ե այն մարտական խնդրով, վոր զրված ե բանակի վրա: Յեթե խընդիրը դժվար ե, գորամարմինների թիվը մեծ ե լինում, խնդիրը հեշտ ե՝ գորամարմինները քիչ են լինում: Միջին հաշվով բանակը կարող ե ունենալ 2—5 գորամարմին: Յեվ անս բանակում կան գորքերի ու գեներլ բոլոր տեսակները՝ Այտանզ գուք կգանեք ողային ուժեր, գրահապատ մասեր, վոր բաղկացած են տանկերից, գրահապատ ավառներիններից և գրահապատ գնացքներից, կգանեք լերկաթուղային գործասեր, խոշոր տրամաշափի հրետանի, մեծ թվով հեծելազոր, կապի գորքեր, սապյորական մասեր ե այլն:

Դիվիզիաները կանգ են առել և այլևս չեն կարողանում առաջ շարժվել, հակառակորդը լավ ե ամբացել: Ահա բանակը նրան ոգնութեան ե գալիս և ուղարկում ե իր ծանր հրետանին, տանկերը, գրահապատ մասերը: Զորքերին անհրաժեշտ ե անցնել մի մեծ գետից, բանակն ուղարկում ե նավակամրջային գորամասերին, վորոնք կամուրջներ են կառուցում:

Մի խոսքով բանակն ունի այն ամենը, ինչ

անհրաժեշտ ե շինում գորքերին իրենց մարտական գործունե յուլթյան ընթացքում:

ԻՆՉՊԵՍ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԵԾԵԼԱԶՈՐԸ

Բանակի կազմի մեջ մտնող հեծելազորը կոչվում ե բանակային և ունի հետևյալ կազմակերպութունը: Հեծելազորում մտնալիցը խմբակը չունի ե: Զոկերը լինում են թրակիր և գնդացրային: Թրակիր շոկերի գեներլ թուքն ու հրացանն ե, գնդացրային շոկերինը՝ ձեռքի գնդացիրը: Յերկու շոկ, մեկը՝ թրակիր, մյուսը՝ գնդացրային, կազմում են մի դասակ: Դասակն ունի 45 ձիավոր, 3 կամ 4 դասակ կազմում են թրակիր հեծելազոր (եսկադրոն): Հեծելազորն արդեն բավական ուժեղ հեծելազորային միավոր ե: Տեսեսական տեսակետից հեծելազորը նույնն ե, ինչ վաշտը հետևակում: Նա ունի իր խոհանոցն ու փոքրիկ գումակը: 3 կամ 4 թրակիր հեծելազոր կազմում են հեծյալ գունդ: Գնդի կրակային հզորութունն ուժեղացնելու համար, նրան տրվում ե նաև գնդացրային հեծելազոր: Գնդացրային հեծելազորը բաժանվում ե չորս դասակի, յուրաքանչյուրում հաստցավոր գնդացիր, ընդամենը 8 գնդացրով: Գնդացիրները մեծ ոգնութուն են ցույց տալիս իրենց կրակով, մանավանդ, յերբ հեծելազորը ձիաթափված ե: Զիաթափված հեծելազորը շատ քիչ հրացանածիղներ ե տալիս: Այսպես, որինակ՝ գունդը ձիաթափվելով տալիս ե ընդամենը մեկ վաշտ, վորի կրակը թույլ էլիներ, չեթե շինեյին գնդացիրները: Գնդացիրները հարկադր են նաև հեծյալ շարքում գործելու համար: Նրանք իրենց թեհար կրակով քայքայում են հակառակորդին, իսկ այդ ժամանակ վրա յեն համնում թրակիր հեծելազորները և թրահատում հակառակորդին: Հեծյալ գունդը, ինչպես և հետևակ գունդն առանձին գրամաս ե և անտեսազեռ ինքնու բույն ե: Գնդի կազմի մեջ մտնում են՝ կապի գասակը, սանխարական և անամարու ժական մասերը:

4 կամ 6 հեծյալ գունդ կազմում են մի զիվիզիա: Ղեկավարության հարմարության համար՝ չերկու գունդ միացնելով, կազմում են բրիգադ: Այդպիսով հեծյալ զիվիզիան ունի 2—3 բրիգադ:

Բացի դրանից զիվիզիան ունի նաև իր զիվիզիական հրետանին, վորն ոգնում է հեծելագորին իր կրակով: Հրետանական բաժնյալը բաղկացած է 3 մարտկոցից, վոր տրվում են բրիգադներին կամ գործում են բոլորը միասին:

Տնտեսական տեսակետից հեծյալ զիվիզան նույնպես ինքնուրույն է, ինչպես հրաձիգ զիվիզիան, բայց ավելի քիչ թվով գումակ ունի: Ընդհանրապես հեծելագորին չի կարելի շատ գումակ ու տեխնիքական գորքեր ապլ, վորովհետև դրանց ներկայությունը կճնշի նրա շարժումը և շարժման արագությունը, իսկ այդ ամեն ինչ է:

Յերկու հեծյալ զիվիզիա կազմում են մի զորամարմին: Ավելի մեծ ինքնուրույնություն և մարտում կայունություն ունենալու համար զորամարմինն ունի իր հորիցային հրետանին, առանձին հորիցային մարտկոցների ձևով և զրահապատ ավտոմոբիլային բաժնյակ, վոր բաղկացած է 9 զրահապատ ավտոմոբիլից: Բացի դրանից կա մի կապի հեծելավաշտ, վոր բաղկացած է հեռագրական գասակներից ու գաշտային ուղիւ-կայանից: Այս ամենը անհրաժեշտ է զորամարմինին: Քաղաքացիական պատերազմը ցույց ավեց, վոր հեծյալ զորամարմինները մեծ հաջողություն են վայելում հակառակորդի թիկունքում կատարած արշավների կամ այսպես կոչված ասպատակությունների ժամանակ: Անցնելով հակառակորդի թիկունքը հեծելագորը կորցնում է իր կապը մյուս զորամասերից, և այդ կապը պահպանվում է միայն ուղիւ-կայանի միջոցով: Չքահապատ մասերն իրենց շարժման արագությունը շնորհիվ չեն չեն մնում հեծելագորից և իրենց կրակով ոգնում են նրան:

Հրետանին ոգնում է հետևակին, ուստի և նա պետք է այնպես կազմակերպված լինի, վոր լավագույն կերպով իրագործի այդ խնդիրը:

Այն հրետանին, վոր տրված է զիվիզիային, կոչվում է զիվիզիական, այն հրետանին, վոր տրված է զորամարմինին, կոչվում է զորամարմնային: Բացի դրանից կա նաև գլխավոր հրամանատարության հրետանի: Սկսենք զիվիզիական հրետանու կազմակերպությունից:

Մեկ հրանոթից կրակելը դժվար է և հարժար էլ չէ: Նշանը հարվածելու համար հարկավոր է փորձնական հրաձգություն կատարել, իսկ այն, մեկ հրանոթով անելու համար, չերկար ժամանակ է պետք: Պետք է դեռ զիվիզիական հրետանու կազմակերպության հրանոթի հետ, իսկ յեթե յուրաքանչյուր հրանոթի համար հեռախոսագիծ անց կացնելու լինենք շատ հեռախոսաթել կգնա, վորը թանկ արժե: Բացի դրանից հրանոթը, ինչպես և յուրաքանչյուր մեքենա կարող է փչանալ, ուստի և մի հրանոթի կողքին մի ուրիշն էլ պետք է ունենալ, վոր առաջինին փոխարինի: Ասենք, շատ բան էլ չի կարելի մի հրանոթով անել: Ոգնություն վերաբերյալ վստահ լինելու և հզոր աջակցություն ցույց տալու համար մի քանի հրանոթ միացնում են և կազմում մարտկոց:

Մարտկոցները տարբեր մեծության են լինում՝ սկսած 2 հրանոթից մինչև 6 հրանոթի: Մարտկոցը մեծ մասամբ կրակում է բոլոր հրանոթներով միևնույն նպատակին:

Մեկանում վեց հրանոթ միանալով կազմում են մարտկոց:

Կրակելու համար պետք է ունենալ արկեր, վոր փոխադրվում են մարտկոցի հետ: Արկերը փոխադրվում են ուժբարկիներով:

Յուրաքանչյուր հրանոթ ունի իր ուժբարկը: Ռմբարկը

ները գիրք են դուրս գալես հրանոթի հետ միասին և նրանցից անմիջորեն կատարվում և հրանոթներին արկեր մատակարարելը:

Բացի շարունակ հրանոթների հետ գտնվող սմբարկղ-ներին, սմբարկղներ կան նաև մարտկոցի սծանդակում: Մարտը շատ արկեր և կյանում և արկերը պետք է լրաց-նել: Արկերի լրացումը մարտկոցը ստանում է բարձր կազմակերպչական միավորից, այսինքն՝ հրետանական գնդից, փոքի վրա մենք գեո կանգ կառնենք հետագայում:

Տնտեսական տեսակետից մարտկոցը նույնն է, ինչ վաղաք հետևակում: Նա ունի իր գուժակն ու խոհանոցը և տնտեսական միավոր է:

Հրաձգության հաշտության համար պահանջվում է հետախույս, այսինքն՝ կապ, պահանջվում են և հետախույզ-ներ, իմանալու համար, թե վորտեղ և հակառակորդը, գիրքը, և ինչպես են ճանապարհները: Այդ բոլոր մարմին-ները մարտկոցն ունի: Առանց դրանց պատերազմել չի կարելի: «Զգիտեմ, թե վորտեղ և հակառակորդը, — չեմ կրակում, կապ չունենմ — չեմ կրակում», — այսպես են ստում հրետամարները:

Կրակը զեկավարելու համար բաժնյակի հրամանա-տարն ունի հետախույզության և կապի խմբեր:

Տնտեսական տեսակետից բաժնյակը նույնն է, ինչ հետևակում գուժարտակը: Նա չունի իր տնտեսութունը, և մարտկոցն իր ամբողջ բաժարարումն ստանում է ուղ-ղակի հրետանական գնդից:

Թնդանութային և հորիցային մարտկոցները կազմում են հրետանական գունդ: Հրետանական գունդն ունի 10 մարտկոց և կրակային հզոր միջոց է զիվիզիայի հրամա-նատարի ձեռքում: Դիվիզիայի հրամանատարը պատվեր-ներ է տալիս հրետանական գնդի հրամանատարին, մտա-նանշելով, թե ուր պետք է ուղղել նրա հրանոթների կրակը:

Հրետանական գնդի հրամանատարը պատվերը տալիս է բաժնյակների հրամանատարներին, իսկ բաժնյակի հրա-մանատարը՝ մարտկոցների հրամանատարներին: Գնդին սրված են կապի ու հետախույզության խմբեր: Բացի դրանից մարտկոցների սուժարկղների արկերը լրացնե-լու համար, գունդն ունի իր սուժարկղները, վոր կազ-մում են այսպես կոչված հրետանական կրանք (պարկ):

Հրետանական կրանքը արկերը բերում է թիկունքից մարտկոցի սծանդակներին և նրանցից վերջնում կրակում պարկուճները: Իսկ ինքը կրանքը արկերը ստանում է զո-րամարմնից, վորը զրա համար ունի հատուկ հրետանա-կան սրանսպորտ: Տնտեսական տեսակետից հրետանական գունդը հավասարվում է հրաձգային գնդին:

Այսպես, ուրեմն, մենք ավարտեցինք գիվիզիական հրետանու, — հրետանական գնդի, — քննությունը: Բաց բացի այդ հրետանուց մեր գիվիզիայում կան մարտկոցներ նաև գնդերում: Գնդային մարտկոցների կազմակերպու-թյունը նույնն է, ինչ հրետանական գնդերի կազմի մեջ մանող մարտկոցների կազմակերպությունը:

Յերբ մենք քննության ելինք առնում հրաձգային զորամարմնի կազմակերպությունը, մենք հիշատակեցինք ծանր հրետանական բաժնյակի մասին, վոր անմիջորեն տրվում է զորամարմնին Ահա հենց այդ հրետանական բաժնյակն է կազմում զորամարմնի հրետանին:

Ծանր հրետանական բաժնյակը բաղկացած է չորս մարտկոցից: Մարտկոցները զեկավարելու համար բաժնյա-կում կան կապի ու հետախույզության խմբեր: Բացի դրա-նից բաժնյակն ունի իր հրետանական կրանքը, վորն ար-կեր է հասցնում մարտկոցներին: Զորամարմնային հրե-տանու ծանր բաժնյակը տարբերվում է զիվիզիական հրե-տանուց նրանով, վոր ունի իր տնտեսութունը և իր դրությամբ հավասարվում է գնդին, այսինքն առանձին զո-րամասի: Այդ բաժնյակը զորամարմնի հրամանատարի ձեռ-

քում այն ուժն է, վոր կուվում է հակառակորդի հրետա-
նու գեմ և ավերում է այն ամենք, ինչ չեն կարող ավե-
րել զիվիզիական հրետանու հրանոթները՝ իրենց թուլու-
թյան պատճառով: Ուստի ծանր բաժնյակի մարտկոցները
զինված են այնպիսի հրանոթներով, վոր կարող են հար-
վածել հակառակորդի հրետանուն. այսինքն՝ զինված են
հեռահար հրանոթներով և այնպիսի հրանոթներով, վոր
կարող են ավերել հակառակորդի 3—5 որում պատրաս-
տած կառուցվածքները:

Ծանր բաժնյակի յերկու մարտկոցը զինված է 107
միլիմետրանոց հեռահար թնդանոթներով, իսկ յերկուսը՝
155 միլիմետրանոց ուժեղ հորիցներով: Յուրաքանչյուր
մարտկոց ունի վեց հրանոթ, վորոնք, ինչպես և թեթև
թնդանոթային մարտկոցներում, յերկվական հրանոթով
կազմում են դասակներ: Ընդհանուր առմամբ ծանր
մարտկոցի կազմակերպությունը վոչնչով չի տարբերվում
զիվիզիական հրետանու մարտկոցի կազմակերպությու-
նից:

Այժմ կանգ առնենք այն հրետանու վրա, վորը կոչ-
վում է գլխավոր հրամանատարության հրետանի:

Այդ հրետանին բաղկացած է զանազան սիստեմի հր-
րանոթներից, ինչպես զիվիզիական ու զորամարմնական հր-
րետանիներում. կան նաև ավելի ուժեղ հրանոթներ, վո-
րոնք փոխադրվում են բացառապես տրակտորներով ու
յերկաթուղիներով: Կա և, այսպես կոչվող, սավառնակա-
հար, կամ զենիտային հրետանի, վորը կրակում է սա-
վառնակների գեմ:

Յերբ պատերազմ են մղում, ամեն տեղ ել հակա-
ռակորդը միատեսակ զիմադրություն չի ցույց տալիս:
Մի տեղ նա շատ ուժեղ է, մի այլ տեղ ավելի թույլ: Լի-
նում են այնպիսի մոմենտներ, յերբ զիվիզիաները ու զո-
րամարմնի կազմի մեջ մտնող հրետանին չի բավականաց-
նում ուժեղ հակառակորդի գեմ հաջողությամբ կռվելու

համար: Ահա հենց այստեղ է, վոր ոգնություն է հասնում
գլխավոր հրամանատարության հրետանին: Նրան ուղար-
կում են իրենց ճակատի հարկավոր տեղամասը: Գլխավոր
հրամանատարության հրետանին, միանալով կազմում է
մարտկոցներ, մարտկոցները կազմում են բաժնյակներ,
բաժնյակները՝ գնդեր, իսկ գնդերը՝ հրետանական զիվի-
զիաներ:

ԶՐԱՀԱՊԱՏ ՄԱՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Զրահապատ մասերը, նայած իրենց փոխադրության
միջոցներին, բաժանվում են տանկերի, զրահապատ ավ-
տոմոբոլիների ու զրահապատ գնացքների: Իսկ ինչպիսի
կազմակերպություն ունեն նրանք:

Տանկեր: Ամենափոքր մարտական միավորը համար-
վում է 3 տանկից բաղկացած դասակը: Մեկ տանկ բաց
թողնելը վտանգավոր է, վորովհետև հեշտությամբ կարե-
լի յե կորցնել այն: Ինչպես և յուրաքարչյուր մեքենա,
տանկը կարող է փչանալ ամեն բույս, և նրան փրկել,
(դուրս քաշել) կարող է միայն մի ուրիշ տանկ: Բացի
դրանից միաք շուճի մի տանկը թողնել մարտի մեջ, վո-
րովհետև նա շատ քիչ ոգուտ կտա շնորհիվ իր թույլ ըս-
պառազինման: Հակառակորդի ամբողջ հրետանական կը-
րակը կարող է կենտրոնանալ նրա դեմ, և տանկն այն
ժամանակ կորած է:

Իսկ յեթե միանգամից շատ տանկեր բաց թողնեն,
նրանք լայն ճակատ կը բռնեն և չեն թողնի, վոր հակա-
ռակորդի կրակը կենտրոնանա: Տանկը հարձակողական
գեներ է: Նա հենց արվում է հետևակին՝ հաղթահարելու հա-
մար հակառակորդի պատրաստած արգելքները: Տանկերն
ավերում են լարափակոցները, լցնում են խրամատները
և իրենց կրակով գնդակոծում հակառակորդին: Հետևակը
շարժվում է տանկերի յետևից և ամրացնում զրավածը:

Տանկերը լինում են թեթև, միջակ ու ծանր: Մենք
ունք գլխավորապես թեթև ու ծանր տանկեր:

Յերեք դասակ թեթև կամ ծանր տանկ կազմում են
տանկա ին մի վաշտ: Բացի զրանից վաշտն ունի նաև հը-
րաժանատարական տանկ: Հետևապես, վաշտում կա ըն-
դամենը 10 տանկ: Տանկային վաշտերը հարձակման ժա-
մանակ արվում են հրաձգային գումարտակներին, վորոնց
հետ միատեղ և գործում են: Տնտեսական տեսակետից
տանկային վաշտը նույնն է, ինչ հրաձգային վաշտը:

Տանկերի յերեք, թեթև կամ ծանր, վաշտ կազմում
են տանկային գումարտակ: Ընդամենը գումարտակում
կա 30 տանկ: Տանկային գումարտակները արվում են
մեծ մասամբ հրաձգային զնդերին, վորոնց հարձակմանը
տանկերն ուղնում են:

Մեկ գումարտակ թեթև և մեկ գումարտակ ծանր
տանկեր կազմում են տանկային գունդ: Տանկային գուն-
դը սովորաբար արվում է հրաձգային զիվիզիաներին:
Բացի յերկու գումարտակներից, տանկային գունդն ունի
նաև վարժական գումարտակ, վորտեղ պատրաստվում են
տանկային գործի մասնագետներ: Գունդը տնտեսական
տեսակետից ինքնուրույն է: Բացի իր տնտեսությունից,
նա ունի իր ավտոտրանսպորտը և յերկու թուղային հա-
տուկ տամաշներ, վորոնցով տանկերը փոխադրվում են
գեպի ժարտի վայրը:

Տանկային զնդերը գտնվում են բանակի սրամտ-
դուրյան սակ, վորը նրանց սալխ է այնտեղ, վորտեղ
նրանք պետք է:

Զրահապատ ավտոմոբիլներ: Բացի, տանկերից, ինչ-
պես մենք ասացինք, կան նաև զրահապատ ավտոմոբիլ-
ներ: Զրահապատ ավտոմոբիլներ կան բանակում, նրանք
մտնում են նաև հեծելազորային զորամարմնի մեջ: Թե
առաջինների և թե մյուսների կազմակերպությունը միա-
տեսակ է, տարբերությունը միայն նրանց կառուցվածքի

մեջ է: Բանակի կազմի մեջ մտնող զրահապատ մասերը
զինված են «Ոստին»-ի սխառեմի մեքենաներով, հեծելա-
զորային զորամարմինների կազմի մեջ մտնողները՝
«Ֆրաս»-ի ավելի թեթև մեքենաներով:

Ինչպես և տանկերը, բանակի կազմի մեջ մտնող զը-
րահապատ ավտոմոբիլներն անհրաժեշտության դեպքե-
րում արվում են հրաձգային զորամարմիններին ու դի-
վիզիաներին:

Հեծյալ զորամարմնի զրահապատ ավտոմոբիլները
գործում են հեծելազորի հետ միատեղ, ուժեղացնելով
հեծելազորի կրակը:

Զրահապատ ավտոմոբիլների կազմակերպության մեջ
մարտական ամենափոքր միավորը դասակն է, վոր բաղ-
կացած է զնդացրերով զինված 3 զրահապատ մեքենանե-
րից: Մեկ զրահապատ ավտոմոբիլով գործելը ուսկ է վո-
րովհետև նա յուրաքանչյուր ըսպե կարող է դուրս գալ
շարքից և նրան փրկել (դուրս հանել) կսրող է միայն մի
ուրիշ ավտոմոբիլ: Հետևապես յերկու զրահապատ մեքե-
նաներից պակաս ուժով գործել չի կարելի: Յերրորդ զը-
րահապատ ավտոմոբիլը դասակին արվում է հուսալիու-
թյան համար: Ավտոմոբիլը չափազանց քմահաճ մեքենա
յե, վոր լավ խնամք է պահանջում, այն է՝ պետք է մաք-
րել, յուղել և ժամանակին նորոգել: Շնորհիվ զրան շատ
հաճախ հարկավոր է լինում դասակի յերեք ավտոմոբիլնե-
րից մեկին դուրս չբերել մարտի, այլ թողնել թիկուն-
քում՝ նորոգելու և մաքրելու համար, այնպես վոր սո-
վորաբար գործում է ընդամենը յերկու զրահապատ ավ-
տոմոբիլ: Յեթե դասակում լինեք ընդամենը յերկու մե-
քենա, ստիպված պետք էր գործել մեկ մեքենայով, իսկ
այդ, ինչպես մենք տեսանք, վտանգավոր է: Յերեք ավ-
տո-զրահապատ դասակ կազմում են մի ավտո-զրահապատ
բաժնյակ: Բաժնյակն ինքնուրույն տնտեսական միավոր
է, ինչպես և հրաձգային գունդը:

Այժմ կանգ առնենք զրահապատ մասերի մի տիպա-
րի վրա ևս, այն է՝ զրահապատ զնդացրերի վրա:

Չրահապատ գնացիր մարտական ու սնտեսական ինքնուրույն միավոր ե: Յոլոր զրահապատ գնացքները պատերազմի ժամանակ գտնվում են բանակի արամադրութեան տակ, վորը նրանց տալիս է այն զորամասերին (գիվիզիա, գորամարմին), վորոնք գործում են չերկաթուղային գծի մոտ:

Չրահապատ գնացքը բարձր միավորութիւնն է կազմում, այլ ինքնուրույն է գործում, իր կրակով պաշտպանելով հետևակին ու հեծելազորին: Չրահապատ գնացքների ուժեղ սպառազինումը միանգամայն հնարավորութիւնն է տալիս նրանց գործելու միայնակ: Բայց լինում են դեպքեր, վոր այն շրջանում, վորտեղ գործում են մի քանի զրահապատ գնացքներ, գործողութիւնները համաձայնեցնելու համար՝ նրանց միացնում են և կազմում ժամանակավոր խմբակներ:

ՌԱԶՄԱԿԱՆ ՈՂԱՅԻՆ ՈՒՅԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ անցնենք ռազմական ողային ուժերի՝ սավառակութեան և ողապարիկային ուժերի կազմակերպութեան քննութեան:

Սավառակութեան մեջ մասնական միավորը համարվում է սավառակը: Յերեք հենց սավառակ կազմում են մեկ ողակ: Ողակը հանդիսանում է այն միավորը, վորի վրա մարտական պարագայում ամենից շատ խնդիրներ են դրվում: Թեև մեկ սավառակ կարող է ինքնուրույն գործել, բայց նրան միայնակ հետախուզութեան ուղարկելը վտանգավոր է: Ամեն ինչ կարող է նրա հետ պատահել ճանապարհին, կը փշանա հանկարծ մեքենան, նրան կը հարվածի հրետանին, իսկ վոր ամենից վտան է, կարող են նրա վրա հարձակվել հակառակորդի մի քանի սավառակներ, և նրան դժվար կլինի նրանց դիմադրել: Հենց այստեղ է, վոր պետք է ուղեկից ունենալ: Մի սավառակ ցած իջեցրին, մյուսը տեղեկութիւններ կը բերի հակառակորդի մասին: Հարձակվեցին հակառակորդի սավառակները, չերկուսի համար ավելի հեշտ կը լինի նրանց դիմադրել: Դրա պատճառով ել

չի հանձնարարվում հետախուզութեան չերկուսից՝ պակաս սավառակ ուղարկել:

Նույնն են և կործանիչ, իսկ ստավել ևս ուժրատար սավառակները: Ուժրատար սավառակների վրա խնդիր է դրվում շատ ուժերը հետել դեպի ցած, իսկ մեկ սավառակ չի կարող շատ ուժը վերցնել:

Բացի դրանից փորձը ցույց է տվել, վոր բոլոր սավառակների 1/3 մասը շարունակ գտնվում է վերանորոգութեան մեջ, ուստի և ողակից շարունակ միայն չերկուսավառակ են գտնվում գործողութեան մեջ: զրահք ել միասին են գործում:

Մեկ սավառակը մեծ մասամբ գործադրվում է հրետանական կրակն ուղղելու համար: Հրաձգութեան ուղղումն այն է, վոր սավառակը, գտնվելով ողում, հետեւում է սավառակներից մեկի արկերի ընկնելուն, և իր դիտողութիւնները մասին հաղորդում է ռազիոյով: Մարտկոցն ընդունում է այդ դիտողութիւններն ու սավառակի ցուցումների համաձայն դեկավարում իր կրակը:

Յերեք մարտկոցն արդեն լավ նշան է վերցրել, սավառակը լետ է թռչում գետին իջնելու համար, կամ ուղղում է մի այլ նշանի դեմ բացած կրակը:

Անցյալ պատերազմը ցույց տվեց, վոր սավառակութեան գործադրութիւնից լավագոյն հաջողութիւնն ըստացվում է այն ժամանակ, չերը միանգամից գործում են մեծ թվով սավառակներ: Յեղել են դեպքեր, չերը սավառակներով կատարելապես անմարտունակ են դարձրել ամբողջ գորամարմիններ:

Հենց մաստալական գործողութեան համար ել հարմարեցրված է սավառակութեան կազմակերպութիւնը: Յերկու ողակ կազմում են մի շոկատ, իսկ չերեք շոկատ՝ մի նավախումբ: Բացի դրանից լինում են առանձին շոկատներ, վորոնք բաղկացած են ութ սավառակից: Նավախումբը հարձակման հզոր միջոց է: Նա կարող է ինքնուրույն մարտական խնդիրներ կատարել՝ թե հակառակորդի սավառակութեան և թե վերերկրյա նշանների դեմ մղած

կռիվներում: Բացի սավառնակներից առանձին շոկատն ու նավախուռներն ունեն իրենց ավտո-տրանսպորտներն ու վերանորոգման արհեստանոցները: Տնտեսական տեսակետից առանձին շոկատն ու նավախուռներն ինքնուրույն են:

ՈՒՍՊՍՐԻԿԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Վերևում մենք ասացինք, վոր ողալին ռազմական ուժերի կազմի մեջ մտնում են նաև ողապարիկային մասեր: Ողապարիկային մասերը, մեծ մասամբ, տրվում են հրետանուն զիտողութայն համար: Թեև սավառնակը լավ միջոց է հրետանական հրաձգութայունը զիտելու համար, բայց նա չունի այն գրական հատկությունը, վոր ունեն ողապարիկային մասերը: Այդ հատկությունը զիտողութայն յերկարատևությունն է: Սավառնակը կը թռչի, կը թռչի ու կնստի, իսկ ողապարիկը կախված է ու անընդհատ նայում է, հետևում է, թե ուր է թագնվում հակառակորդը: Յերկու ողապարիկ կազմում են ողապարիկային մի շոկատ: Բացի ողապարիկից շոկատն ունի գազ արտադրելու խումբ, գուժակ և տնտեսութուն: Տնտեսական տեսակետից նա հավասարվում է առանձին զորամասի:

Այժմ կանգ առնենք ճարտարագիտական ու տեխնիկական զորքերի վրա:

ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐ-

ՊՈՒԹՅՈՒՆԸ

Քննելով հրաձգային զորամարմնի կազմակերպությունը, մենք տեսանք, վոր զիրքերն ամրացնելու, կամուրջներ պատրաստելու, ճանապարհներ նորոգելու, փոքրիկ անցարաններ պատրաստելու և պահպանելու և, վերջապես, քողարկման աշխատանքների համար նրան տրվում է սապյորական գումարտակ: Բայց յերբեմն զորամարմինը գեմ է առնում այնպիսի արգելքների, ինչպես որինակ՝ լայն գետն է, վորի վրայով կամուրջ պատրաստելը սապյորական գումարտակի ուժերից վեր է: Ահա այստեղ նրան բանակից տալիս են նավակամրջային մասեր, — նավակամրջային գումարտակներ: Նավակամրջային գումարտակը բաղ-

կացած է յերկու վաշտից: Նավակամրջային գումարտակների խնդիրն է՝ պատրաստել ու պահպանել անցարաններ, պատրաստել նավակամուրջներ և նավակամուրջներով զորքերին անց կացնել գետից: Յուրաքանչյուր նավակամրջային գումարտակ կարող է պատրաստել կամուրջ՝ ձիավորների համար 213 մետր և վոտավորների համար 404 մետր յերկարութայն: Յուրաքանչյուր նավակամրջային վաշտ կարող է պատրաստել կամուրջ ձիավորների համար 105 մետր և վոտավորների համար 203 մետր յերկարութայն: Նավակամրջային գումարտակն ունի տնտեսական գուժակ և մի գուժակ էլ նավակամուրջներ փոխադրելու համար: Նավակամուրջները փոքրիկ նավեր են, վոր գցում են շրի վրա, միացնում են իրար հետ և նրանց վրա փռում տախտակներ: Այսպիսով ստացվում է կամուրջ:

Կամուրջով շարժումը կանոնավորում է նավակամրջային գումարտակի հրամանատարը, վորի պահանջներին յենթարկվում են կամուրջով անցնող զորամասերը:

Բացի նավակամրջային գումարտակներից բանակում կան ելեկտրո-տեխնիքական մասեր: Ելեկտրոտեխնիկական մասերը միացված են վաշտերին: Վաշտն ունի լուսարձակ և յերթական ելեկտրո-կայան:

Լուսարձակն ողային տարածությունն ու տեղանքը լուսավորելու համար է: Լուսարձակներն աշխատում են սավառնակահար հրետանու հետ, վորպեսզի հրետանու համար լուսավորեն հակառակորդի սավառնակը: Առանց լուսարձակի հնարավոր չէ գիշերային հրաձգություն կատարել հակառակորդի սավառնակների դեմ:

Յերթական ելեկտրոկայանը շտաբներն ու հիվանդանոցները լուսավորելու համար է:

Լուսարձակային վաշտերը գտնվում են բանակներին կից և անհրաժեշտութայն դեպքում տրվում են այն զիվիզիաներին, զորամարմիններին ու զլխավոր հրամանատարութայն հրետանուն, վորոնց կազմի մեջ մտնում են սավառնակահար մարտկոցներ:

ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Բանակին կից կան նաև յերկաթուղային գոր-
քեր, վորոնք կազմում են գնդեր: Գունդն ունի յեր-
կու գունարտակ: Գունարտակը բազկացած է յերկաթու-
ղային վաշտերից, բազա-վաշտերից և արհեստանոցներից:
Յերկաթուղային վաշտերը վերականգնում են առաջ ըն-
թացող գորքերի յետևից յերկաթուղագիծը և սպասավո-
րում են այդ յերկաթուղին: Իսկ յերբ գորքերը գոր-
ծում են մշտական յերկաթուղիներից հեռու վայրում,
յերկաթուղային գորքերը բանակի ցուցումներով կառու-
ցում են դաշտային (ժամանակավոր) յերկաթուղիներ: Նա-
հանջի դեպքում նրանք փշացնում են յերկաթուղա գիծը:

Յերկաթուղային գորքերը լինում են՝ շինարարական
և շահագործական: Շինարարական գորքերը վերականգ-
նում են ավերված յերկաթուղագիծը, իսկ շահագործա-
կանը սպասավորում են յերկաթուղին:

ՈՒՐԻՇ ԻՆՉ ՈՒՆԻ ԲԱՆԱԿԸ

Վերջապես՝ բանակում կան նաև ավտոմոբիլային,
քողարկման ու բիմիական գորքեր: Ավտոմոբիլային
գորքերը 20-ական մեքենայով կազմում են ավտո-բեռ-
նոկաններ: Իրանք արագ գորքեր ու ուղղմական բեռ փո-
խադրելու համար են: Ավտոմոբիլային գորքերի դերը մեծ
է: Լինում են դեպքեր, յերբ պահանջվում է արագ հե-
ռավոր տարածություն վրա մի տեղից մի այլ տեղ փո-
խադրել գորքերին: Զորքերն իրենք այդ անել չեն կարող,
և նրան ոգնություն են գալիս ավտոմոբիլային գորքերը:

Քողարկման գորքեր կազմում են վաշտեր, յուրա-
քանչյուր վաշտում կա յերկու դասակ: Նրանք ղեկավա-
րում են քողարկման բարդ աշխատանքները, դիրքերը կա-
րևորագույն կետերում: Նրանք քողարկում են նաև պա-
հեստները, յերկաթուղային կայարանները և թիկունքային
այլ կառուցվածքները:

Սափառակուսիքան գարգացումն ու սափառակային
նափատորմի՝ թիկունքի վրա կատարած հաճախակի հար-
ձակումները ստիպում են քողարկել բոլոր թիկունքային
կառուցվածքները, վորոնց անվաս լինելուց է կախված
գորքերի մարտունակությունը: Յերևակայեցեք, վոր հա-

կառակորդի սափառակուսիքանը նկատել ու փոշնչացրել է
մեր փամփուշտներով ու արկերով լի պահեստները, և
գորքերը մնացել են առանց փամփուշտի ու արկի և գրա-
շնորհիվ կորցրել են իրենց մարտունակությունը: Իրա հա-
մար էլ թշնամու հարձակումից փրկելու համար հարկավոր
է պահեստներն այնպես քողարկել, վոր նրանք նկատելի
չլինեն հակառակորդին: Այդ գործը շատ բարդ է և հմտու-
թյուն է պահանջում: Իրենք, գորքերն այդ անել չեն կարող:
Նրանք այդքան ուժ և միջոցներ չեն ունենա: Այստեղ
նրան ոգնություն են գալիս քողարկման գորքերը:

Բայց քողարկման գործասերի վրա չպետք է հույս
դնել: Նրանք, ինչպես ասացինք, բարդ աշխատանքների
համար են: Իսկ քողարկումն անհրաժեշտ է ամեն տեղ և
ամեն ժամանակ, ուստի ընդհանրապես՝ գորքերը և ա-
ռանձնապես՝ յուրաքանչյուր մարտիկ, պետք է կարողա-
նան քողարկել իրենց, հիշելով, վոր յեթե մասնեն իրենց
տեղը, նրանք վտանգի յեն յենթարկվում, վորովհետև
կալոց են կոտորվել հակառակորդի հզոր կրակով:

Քիմիական գորքեր հակառակորդի դեմ հեղձուցիկ
պայքերով գործելու համար են: Ներկայումս կովի բիմիական
միջոցների գարգացումն այնքան է աճել, վոր գորքերն ամեն
բազե կարող են յենթարկվել հակառակորդի գազային
հարձակմանը: Գազային հարձակման համար գազագնդերից
գազ են բաց թողնում: Գազը գազագնդերում գտնվում է
հեղուկ դրություն մեջ: Վեց գազագնդերից կազմվում է
գազային մարտկոց: Գազային մարտկոցները հասավում են
այն շրջանում, վորտեղ պատրաստվում է գազային հար-
ձակումը:

Գազային մարտկոցների հաստումից հետո սպասում
են ուղեկից քամու, վորը կը փչի հակառակորդի կողմը:
Այդպիսի քամի լինելու պես բաց են անում գազային
մարտկոցների լսփանակները, և հեղուկ գազը, դուրս նետ-
վելով, գոլորշիանում է: Գազի գոլորշիները քամին տա-
նում է հակառակորդի կողմը և նրան փոշնչացնում: Իսկ կոշ-
վում է գազագնդային գրոն: Կարելի չէ գազային հարձա-
կում կատարել նաև ականանեաններից ու հրանոթներից
արձակած բիմիական արկերով: Զորքերը միշտ պետք է
պատրաստ լինեն պաշտպանվելու հակառակորդի գազերից:

Իրա համար հարկավոր ե անընդհատ քիմիական հետախուզութիւնն կատարել և ունենալ իրենց հետ օարքին հակագազ, վորպեսզի տաքնապի ըոպելին հագնեն:

Քիմիական արկերով հրաձգութիւնը կարող են կատարել զորքերն՝ իրենք, վորովհետև այդ հրաձգութիւնը վոչնչով չի տարբերվում սովորական արկերով ու սկաններով գործած հրաձգութիւնից: Իսկ գաղագնդալին գրոհը զորքերն իրենք չեն կարող կատարել, վորովհետև գրա համար պահանջվում են հատուկ գիտելիքներ ու միջոցներ: Ահա այստեղ նրանց ոգնութիւնն են գալիս քիմիական զորքերը: Բացի գաղագնդալին գրոհներից, քիմիական զորքերը, հրամանատարութեան պատվերով թունավորում են այն տեղամասերը, վորտեղով պետք ե անցնի հակառակորդը: Այսպես, որինակ՝ դիցուք, հակառակորդը պետք ե անցնի կամուրջով: Նրա առաջխաղացումը կասեցնելու համար հարկավոր ե կամուրջի մատուցներն ու կամուրջը թունավորել գաղերով: Հասնելով կամուրջին, հակառակորդն ամենից առաջ, պետք ե նրան անվաս դարձնի, զրանով ել նա ուշանում ե: Իսկ յեթե կամուրջը նախապես անվաս չգարձնի, նա այստեղ մեծ գոհեր կը տա:

Քիմիական զորքերը կազմում են վաշտեր, վորոնք անհրաժեշտութեան դեպքում տրվում են զորամարտիներին ու դիվիզիաներին:

ՈՒԺԸ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ Ե

Այսպես, ուրեմն, մենք քննեցինք զորքերի ու զենքի բոլոր տեսակները, և համարձակ կարող ենք ասել, վոր դրանք բոլորն ել անհրաժեշտ են: Նրանցից յուրաքանչյուրն ունի այն հատկութիւններն ու միջոցները, վորից գուրկ ե մյուսը: Միանալով իրար հետ մարտական դժվարին գործունեութեան համար, նրանք լուծում այն բոլոր խնդիրները, վոր զրվում են նրանց առաջ մարտում, և ընդհանուր ջանքերով հասնում են բանակի նպատակին, այն ե՝ ջախջախում են իրենց թշնամուն:



ԳԻՆԸ 25 ԿՈՊ.

ԱԳ 1
ՕՆ 3

«Ազգային գրադարան»



NL0220900

40.360